

# ՄԵՆՔ ԱՆՊԱՐՏԵԼԻ ԵՆՔ
# WE ARE INVINCIBLE
# JSME NEPORAZITELNÍ

VELES

Embassy of the Czech Republic in Yerevan



**ՄԱՐԻՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ**
*«Վելես» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ*

**MARINA POGHOSYAN**
*"Veles" Human Rights NGO President*

ԱՅՍ ՄԱՐԴԻԿ ՈԳԵՇՆՉՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ
ԵՆ, ՕՐԻՆԱԿԵԼԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ
ԵՎ ԱՆՆԿՈՒՆ ՄԱՐՏԻԿՆԵՐ

THESE PEOPLE ARE A SOURCE OF
INSPIRATION, EXEMPLARY CITIZENS
AND TIRELESS FIGHTERS

Երբ մտահղացանք այս նախագիծը, չէինք էլ կարող պատկերացնել, որ Հայաստանում տեղի կունենա Թավշյա հեղափոխություն: 2018-ի առաջին ամիսները շատ ընկճող էին, նախկին իշխանությունները գնում էին վերարտադրության, ինչն էլ ավելի էր սահմանափակելու իրավապաշտպանների, ակտիվիստների և լրագրողների գործունեությունը մեր երկրում: Որպես իշխանությունների կողմից տարիներով հետապնդվող իրավապաշտպան՝ ցանկացա ստեղծել մի հարթակ, որտեղ մյուս իրավապաշտպանները կխոսեն իրենց նկատմամբ ճնշումների, բռնությունների մասին: Հարթակ, որ հաճախ ինքս չեմ ունեցել...

Սակայն ի սկզբանե չէինք նախատեսել միայն դժգոհել դժվարություններից, ճիշտ հակառակը՝ ցանկանում էինք ցույց տալ, որ չնայած բազմաթիվ ճնշումներին, սպառնալիքներին ու բռնություններին՝ պայքարող անհատները շարունակում են անել այն, ինչին անկեղծորեն հավատում են: Ճնշումներին դիմադրելով՝ նրանք դարձել են անպարտելի: Հենց այդպես էլ որոշեցինք անվանել մեր այս նախագիծը: Մեր զրուցակիցներից շատերը խուսափում են իրենք իրենց անվանել անպարտելի, սակայն նրանք դա իրենց գործով են ապացուցել: Այս մարդիկ ոգեշնչման աղբյուր են, օրինակելի քաղաքացիներ և աննկուն մարտիկներ:

Մենք առանձնացրել ենք ընդամենը 20 անպարտելիների, սակայն, բարեբախտաբար, Հայաստանում նրանց թիվը շատ ավելին է: Այդ անհատների ներկայությունը մեր կողքին մեզ հուսադրում է, որ մենք էլ մի օր կունենանք այնպիսի պետություն և հասարակություն, որտեղ մարդն իսկապես բարձրագույն արժեք է, նրա արժանապատվությունը հարգված է, իրավունքները՝ պաշտպանված:

When we envisaged this project, we would not have imagined that Armenia will undergo a Velvet Revolution. The first months of 2018 were very depressing; the former authorities were going to reproduction, which would further restrict the activities of human rights defenders, activists and journalists in our country more strictly. As a human rights activist persecuted for years by the authorities, I wanted to create a platform where other human rights activists would speak about pressure and violence against them. Platform that I often haven't had ...

However, we did not initially plan to complain of difficulty, but just the opposite, we wanted to show that, despite the many pressures, threats, and violence, struggling individuals keep on doing what they really believe in. By resisting pressure, they have become invincible. That's how we decided to call this project. Many of our interlocutors avoid saying that they are invincible while talking about themselves, but they have proven it by their work. These people are a source of inspiration, exemplary citizens, and tireless fighters.

We have separated only 20 invincible ones, but fortunately, their number is much higher in Armenia. The presence of these individuals among us assures that one day we will have a state and society where a person is truly the highest value, that his/her dignity is respected and his/her rights are protected.



**ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
*բնապահպան ակտիվիստ*

# ԵՍ ԻՄ ՊԱՐՏՔՆ ԵՄ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ ԲՆՈՒԹՅԱՆԸ

«Ես Անի Խաչատրյանն եմ, ապրում եմ Հայաստանում, մարդ եմ: Մանկությունից սկսած չեմ կարողացել հանդուրժել անարդարությունը: Ինձ համար ավելի բարդ է ոչինչ չանելն ու լռելը, քան անելը: Օրինակ, եթե տեսնում եմ ինչ-որ անարդարություն ու լռում եմ,  հետո ինձ մեջից երկար կրծելու է, բայց եթե խոսում ես, արտահայտվում ես, ավելի հանգիստ ես լինում: Իսկ ինչո՞ւ ոչ ես. ցանկացածն էլ կարող է անել: Ես ստանում եմ ամեն ինչը բնությունից, ես ապրում եմ բնության հաշվին, ես հանգստանում եմ բնության շնորհիվ և իմ բնապահպանական ակտիվիզմով ես պարտք եմ վերադարձնում: Ես սա մարդկության համար չեմ անում, ուղղակի իմ պարտքն եմ վերադարձնում բնությանը, դրա համար ես կարիք չունեմ վճարվելու սրա համար:

Երբ Մաշտոցի պուրակում էինք, ամեն օր գնում էինք երեխայիս հետ: Հետո օր էր գալիս, որ մտածում էի՝ ինչ հոգնած եմ, այսօր չգնամ: Հետո հասկանում էի, որ եթե ամեն մեկը մտածի՝ այսօր ես չգնամ, այնտեղ մարդ չէր լինի: Ու հասկանում ես, որ եթե ամեն մեկս ասի՝ հենց ես կարող եմ փոխել, մենք կփոխենք մի բան: Բայց եթե բոլորս ասենք՝ ես ոչ մի բան չեմ կարող փոխել, ուրեմն ոչինչ չենք փոխի: Կնստենք ու ոչինչ առաջ չի գնա: Դրա համար էլ ես իմ չափով անում եմ, որքան կարողանում եմ: Պետական մարմիններն արդեն գլուխ չեն դնում մեզ հետ, հիմնականում ճնշում են նրան, փորձում են վախեցնել նրան, ում գիտեն, որ կվախենա:

Իրենք հասկանում են, որ քեզ հետ այդ լեզվով չեն կարող խոսել, կաշառելու լեզվով չեն կարող խոսել, քեզ հանգիստ են թողնում: Կամ փորձում են քեզ վարկաբեկել, ինչ-որ «կեղտ» գտնեն, հետո չեն գտնում ու սուտ լուրեր են տարածում, թե «սրանք գրանտակեր են, սրանք ուղղորդված են»: Ապացուցեք, հո միայն խոսելով չի՞, ապացուցեք, որ ձեր ասածը ճիշտ է:

Երբ գնում ես ու տեսնում ես բնության ավերածությունները, հոգեպես լրիվ սպառվում ես: Խոսրովի արգելոցի հրդեհից հետո, երբ գնացել էինք կամավորներով կրակը հանգցնելու, երկու օր ես սպառված էի, դատարկ էի, փորձում էի հանգստանալ: Երբ գնում էինք անտառների մոնիթորինգ անելու, կտրած ծառերը որ հաշվում-ֆիքսում էինք, այնքան էներգիա էր տանում, որ մի քանի օր չէի կարողանում ուշքի գալ: Այդպիսի դեպքերում ուղղակի ուսապարկս վերցնում եմ, գնում եմ բնության մեջ մարդկությունից հեռու վրանի մեջ հանգստանում եմ ու նոր էներգիայով հետ եմ գալիս: Այնպես որ բալանսը գտել եմ, որ մի տեղից վերցնում եմ, հետո մեկ այլ տեղ դնում եմ: Չեմ կարող ասել, թե ինչ կարող է լինել, որ ես ինձ համարեմ պարտված: Ես սպասելիքներ չունեմ: Ես գիտեմ, որ ես չեմ կարող լրիվ խնդիրները լուծել, իմ արածները փոքրիկ կաթիլներ են, որ հետո գուցե մի ավելի մեծ բանի վերածվեն: Պարտությունս կլինի այն, որ  Հայաստանում հանքարդյունաբերության պատճառով այլևս ապրելու տեղ չմնա, երբ ամեն ինչ թունավորված կլինի, ես կհամարեմ, որ այստեղ ես պարտվել եմ ու կգնամ մեկ այլ երկիր ու նույնը այնտեղ կանեմ: Այս պահին ինձնից ազատվելու միակ տարբերակն ինձ ֆիզիկապես ոչնչացնելն է լինելու, այլապես ես շարունակելու եմ անել այն, ինչ անում եմ»:





**ANI KHACHATRYAN**
***environmental activist***

# I SIMPLY RECOVER MY DEBT TO NATURE

"I am Ani, I live in Armenia and I am a human. Since childhood I have been like this, I could not tolerate injustice. It's more difficult for me to do nothing and keep silent, than to do something. For example, when I see something unfair, and keep silent, this idea will bother me for a long time until I speak it aloud, and calm down.
So why not me? Anyone can do it. For example, as I get everything from nature, I live on the account of nature, I have my rest thanks to nature, for me environment protection is like recovering a debt. I mean I do it not for humanity of course it sounds not good, but I simply recover my debt to nature, that is why I do not need someone to pay me for that.
When we were in Mashtots Park (every day I went there with my child), there were days when I felt tired and did not want to go, but then I understood, that if every day everyone thinks he or she may not come, there will be no one there. Then you realise that if each of us thinks that he or she can change something, he or she will really do, but if we think we can change nothing, we will have what we have, and nothing will change to something better. That is why I do my best, that is the answer to the question why me. Our state authorities do not already want to deal with us, they suppress and threaten such people whom they think they can.

When they threaten you and you ignore them, they understand that they cannot threaten you, you are not afraid of them, they realise they cannot bribe you, and leave you alone. After this they try to mire you, and when understand they cannot, they begin to spread false information about you.

For example when they start calling you a "grant-eater", and declare that your actions are directed from somewhere above. But this is not fair to speak such serious things just in the air. One should prove whatever he or she says. Prove that whatever you say corresponds to reality. Especially when you go and see these destructions in the nature, you feel spiritual exhaustion.

After the fire in Khosrov Reserve, when we, several volunteers, went to extinguish the fire, two days I felt exhausted and empty, trying to recover this emptiness.



When we went to exercise a monitoring in the forest, we counted the cut trees and fixed them. This process takes your energy away. And again you need several days to recover your energy. In such situations I get tired, but I found the way to recover myself, I take my backpack, go somewhere in the nature, far away from people, and have a rest in a temp for couple of days. In such a way I relax and come back filled with new energy. I may say I found balance. I take something and then put another thing on its place. Now I feel it is time to have a rest. I cannot actually say when I can consider myself defeated. I do not have any expectations. I do not plan what to do next.

I know I cannot solve all the problems. My actions are drops in the ocean, which may further become something. I will consider myself defeated when there will not be a place to live in Armenia anymore because of mining problems. When everything is already polluted I will consider myself defeated and I may leave for another country to begin my activities elsewhere.

If one wants to get rid of me, he or she will have to get rid of me physically. Otherwise I will continue doing what I do."



**ԳԵՎՈՐԳ ՍԱՖԱՐՅԱՆ**
*ակտիվիստ*

# ՔԵԶ ՀԵԳՆՈՒՄ ԵՆ, ՔԵԶ ՀԱԼԱԾՈՒՄ ԵՆ, ԲԱՅՑ ՎԵՐՋՈՒՄ ԱՅԴ ՀԵԳՆՈՂՆԵՐՆ ՈՒ ՀԱԼԱԾՈՂՆԵՐԸ ՊԱՐՏՎՈՒՄ ԵՆ

«Ես Գևորգ Սաֆարյանն եմ: Ո՞վ եմ. չգիտեմ՝ ոնց կարելի է ներկայանալ: Որոշները մեզ անվանում են ակտիվիստներ, որոշներն անվանում են քաղաքական գործիչներ, նախկին ռեժիմի ներկայացուցիչները մեզ ասում էին դավաճաններ կամ ամենավատ հայեր:

Հիմա չգիտեմ՝ ոնց ներկայանամ: Վաղուց է արդեն՝ ակտիվ դաշտում եմ: Կարծում եմ՝ դա բնական հոգեվիճակ է, երբ մարդը տեսնում է, որ իր համար արժեք ունեցող երևույթները ոտնահարվում են, սկսում է այդ երևույթների համար պայքարել դրանք ոտնահարողների դեմ: Մարդու իրավունքները, ժողովրդավարությունը, պետությունը, ազգը, այս երևույթներն ինձ համար արժեք են, որոնք առնվազն 20 տարի ոտնահարվում էին ռեժիմի կողմից: Եվ անհրաժեշտություն կար այդ արժեքները պաշտպանելու: Ճնշումներ եղել են, սկսվել է այսպես՝ սկզբից փորձել են համոզել դուրս գալ պայքարից, հետո կաշառել, հետո սպառնալ, հետո սպառնալ ընտանիքի անդամներին, հաջորդ շերտը աշխատանքից հեռացումն էր, հետո իմ դեմ մահափորձն էր, իսկ վերջին գործողությունն իմ կալանավորումն էր: Իհարկե, այդ ամեն ինչը սպասելի էր: Որովհետև ես գիտեի, թե դիմացինն ով է: Ու քանի որ սպասելի էր, էդքան մեծ ազդեցություն չի ունեցել: Վերջին անգամ, երբ ինձ պատժախուց տարան, դա այլ ֆորմատ էր, ուղղակի պատժախցով էին ճնշում: Պատիժը վերջանալուց հետո նորից պատժախուց նշանակեցին և մոտավորապես մի ամիս ես գտնվեցի պատժախցում, որտեղ պայմանները մարդկային չեն:

Պատժախուցը գտնվում է հողից ավելի ցածր՝ կիսանկուղային հարթակում, որտեղ շենքի կոյուղին լցվում էր խուց: Խցում, ըստ էության, չկային հիգիենայի պայմաններ որպես այդպիսին: Տվյալ պարագայում փորձում էին ինձ ճնշել այդ եղանակով: Հանրության ճնշման տակ, փաստաբաններիս ճնշման տակ չկարողացան, ստիպված ինձ դուրս բերեցին պատժախցից: Երբ որ դու պայքարում ես մի ամբողջ պետության, մի ամբողջ ազգի իրավունքների ու շահի համար, մոտիվացիան շատ բարձր է: Եվ այստեղ է այդ ինքնազոհության պատրաստակամությունը, երբ որ դու գիտես՝ շատ բարձր արժեքի համար ես գնում որոշակի կոհողությունների: Հանուն այդ նպատակի թե՛ ես, թե՛ իմ ընկերները, համախոհները միշտ պատրաստ ենք եղել ընդհուպ մինչև կյանքով հատուցել: Դրա համար ավելի փոքր փիջումները մեզ համար ավելի հեշտ էին լինում, օրինակ՝ ազատության փիջումը կամ սպառնալիքներին դիմադրելը կամ մահափորձերին դիմանալը: Եթե դու պատրաստ ես ընդհուպ մինչև կյանքով պայքարը, ապա անազատությամբ պայքարելն ավելի հեշտ է: Դու գիտես, որ քո առջև գործ կա անելու: Դու գիտես, որ այդ գործի համար ես ճնշվում և պետք է ճնշվես:

Բոլոր ռեժիմների ժամանակներում հեղափոխականներին ճնշել են, բանտարկել են: Շատ դեպքերում սպանել են: Քեզ հեգնում են, քեզ հալածում են, բայց վերջում այդ հեգնողներն ու հալածողները պարտվում են: Մեզ ասում են, որ «դուք ճակատով հարվածում եք բետոնից պատին»: Ես համաձայն էի այդ մոտեցման հետ, բայց ասում էի՝ երբ որ դու համառորեն հարվածում ես ճակատով այդ բետոնե պատին, վերջիվերջո այդ պատը ճաք է տալու: Այսինքն՝ դու համբերությամբ ես հաղթում, համառությամբ ես հաղթում: Ի վերջո ճաքեց այդ պատը, և մենք բոլորս տեսնում ենք դա»:





**GEVORG SAFARYAN**
*activist*

YOU ARE MOCKED,
PERSECUTED,
BUT AT THE END
THOSE MOCKERS AND
PERSECUTORS
ARE DEFEATED

“I am Gevorg Safaryan. Who am I? I do not know how to introduce myself.  Some call us activists, some call politicians, former regime officials call us traitors or the worst Armenians. Now I do not know how to introduce myself. I have been in the active field for a long time.
I think it is a natural mental state of a person when he/she sees that phenomena that are valuable to him/her are being violated, he/she begins to fight for these phenomena against those who violate them.

Human rights, democracy, the state, the nation: these phenomena are of great value for me, for at least 20 years they have been violated by the regime. And there was a need to defend those values.

There were many pressures. It started the following way - from the very beginning they began to persuade me to stop fighting, then they tried to bribe me, then to threaten, then to threaten my family members, the next stage was dismissal from work, and then the assassination attempt on me, the last operation was my detention. Of course, all that was expected. Because I knew who stood in front of me. And as it was expected, it did not have so much influence.

The last time I was taken to a punishment cell, it had a different format, and it was simply punitive. After the end of the sentence, I was again sentenced to a punishment cell, and for about a month I was in a punishment cell where the conditions were not human.
The punishment cell is located below the earth surface, on a semi-cellar platform and the sewerage wastewaters of the building are filled into the cell. In essence, there were no hygiene conditions in the cell as such. That is to say, they were trying to suppress in such a way.



But under the pressure from the public, under the pressure of my attorneys, they were forced to take me up to the cell.

When you are struggling for the rights and interests of a whole state, of a whole nation, your motivation is very high. And here is the willingness of self-sacrifice, when you know that you go to certain sacrifices for a very high value.

I, my friends and supporters have always been ready to lay down our lives. That's why smaller concessions - concession of freedom, or resisting to threats or enduring the assassination attempts. were easier for us. If you are ready to lay down your life, struggling by your unfreedom is easier.

You know that you have a mission. You know that for that matter you are oppressed and you must be oppressed. At all times, in all regimes, the revolutionaries were suppressed and imprisoned. In many cases, they were even killed. You are mocked, persecuted, but at the end those mockers and persecutors are defeated. We are told: "you run into a brick wall."

I agreed with that approach but I said that when you run into a brick wall stubbornly, one day the wall would eventually crack. I mean you win it with patience, with persistence. Finally, we made the wall to crack and we all see it."



**ԱՐՄԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ**
*իրավապաշտպան*

# ՈՐԵՎԷ ՄԱՀԿԱՆԱՑՈՒ ՉԻ ԿԱՐՈՂ ԻՆՁ ԿՈՏՐԵԼ

«Ես Արմինե Առաքելյանն եմ, մասնագիտությամբ քաղաքագետ, միջազգային իրավաբան, մարդու իրավունքների փորձագետ, կարգացման ոլորտում փորձագետ և պատանի տարիքից աշխարհի տարբեր երկրներում, որ բնակվել եմ, ակտիվիստ, իրավապաշտպան: Թե մասնագիտությամբ, բայց նաև իմ հոգեկերտվածքով և կասեի՝ էությամբ և նաև կրթությամբ ես չեմ կարողացել երբեք անտարբեր լինել որևէ տեսակ անարդարության նկատմամբ: Թե իբր մարդ, քաղաքացի, բայց նաև իբր մասնագետ, ես որևէ տեղ չեմ փորձել արմատներ գցել, Փարիզ կամ Ժնև կամ Աֆրիկա. որևէ տեղ, որ բնակվել եմ, չեմ արմատներ դրել, որովհետև միշտ մտածել եմ, որ պիտի կարողանամ իմ հայրենիքում բնակություն հաստատել:

Դրա համար իմ ամբողջ ներդրումը, եթե կարելի է ասել, իմացությունների, կյանքի, այս էներգիայի և ամեն ինչով ես 1999-ից սկսած ակտիվորեն ներդրել եմ մեր հայաստանյան իրականության մեջ:

Մեր քաղաքացիության հիմքերը և արմատները լավ պետք էր դնել և սերունդ պատրաստել: Անընդհատ հարցադրույցներով ազատ խոսքս եմ փորձել հնչեցնել: Ազատ խոսքս հնչեցնելուց հետո միշտ եղել են հարվածներ: Դե ես տարբեր ձևերով դիմադրել եմ, գնացել եմ ոստիկանություն, հայց եմ ներկայացրել, փորձել եմ իրավական պայքարով, բայց դժբախտաբար այդ բոլոր գործերը կոծկվել են, փակվել են: Դրանից հետո շատ պարզ ակցիա էր, եթե կարելի է ասել ակցիա. Երևանի Հանրապետության Հրապարակում պարզապես շատրվան մտա և լողացա և նստեցի չորանալու:

Ոստիկանները մոտեցան, որ պիտի գնաս, ես էլ ասացի. «Օրենքն ասեք, որ ենթարկվեմ: Ի՞նչ օրենք եմ խախտել»: Չնշեցին, ձեռքերս ձեռնաշղթայեցին և երկաթի վրա նստեցրին: Երեք ժամ հանրային կտտանքների եմ ենթարկվել արևի տակ, ցավերի մեջ: Եվ դրանից ոչ մի միջամտություն չի եղել ոչ մի կողմից, որպեսզի կարողանան ինձ այդ վիճակից հանել: Հետո էլ ինձ նորից տարել են անօրինական ձևով, առևանգել են և տարել են հոգեբուժարան, Նուբարաշենի հոգեբուժարան և երեք ժամ այնտեղ էլ ձեռքերս, ոտքերս կապած կտտանքների են ենթարկել՝ կանայք ծեծում և տանջում էին, իսկ տղամարդիկ նայում և հաճույք էին ստանում: Շատրվանի դեպքից հետո շատ հստակ էր՝ մարդիկ սոլիդարություն չցուցաբերեցին, շատ քիչ, հատուկենտ:

Բայց ես շարունակում եմ իմ ազատ խոսքս, իմ պայքարս, խոսքով, բայց երբեք՝ բռնությամբ: Ես եղել եմ որպես բռնության կրող, տուժող, բայց երբեք բռնությանը բռնությամբ չեմ պատասխանել: Պիտի ավելի հզոր լինես, որովհետև շատ տգեղ, կեղտոտ և արժանապատվության հարվածով բաներ կարող են լինել: Ես շատ դժվար այդ ամեն ինչը տարա, բայց հետո ավելի ես հզորանում, հասկանու՞մ եք, և այդ հզորանալուց հետո իրենք արդեն տեղի են տալիս: Ես ինձ շատ արժանապատիվ, հզոր, հպարտ մարդ եմ գիտակցում: Ինձ թվում է, որ որևէ մահկանացու չի կարող ինձ կոտրել»:



**ARMINEH ARAKELIAN**
***Human rights defender***

# I THINK NO MORTAL CAN BREAK ME EVER

“I am Armineh Arakelian. I am a political scientist, an international lawyer, a human rights expert, an expert on development by profession and also an activist and a human rights defender in various countries in the world where I have resided from my early youth upwards. Neither my profession, nor my mentality, nature nor my education allowed me to be indifferent to any kind of injustice. Both as a person, a citizen, and also as a specialist, I did not try to put down roots in Paris or Geneva or Africa or anywhere else I lived in; because I have always thought I should be able to settle in my homeland.

That is why I have actively funneled all my knowledge, life, and energy into our Armenian reality since 1999. We needed to well develop the bases and roots of our active citizenship and build a generation. I've regularly tried to make my free speech audible through interviews. There have always been strokes after I have made my free speech. I have resisted in different ways, I have tried to do everything in legal form, I went to the police, filed legal actions, tried to make my civic struggle legal, but, unfortunately, all these legal cases were terminated and closed.

After that, it was a very simple civic action, if one can call it an action. I just entered into the fountain in the Republic Square in Yerevan and swam, then sat down to dry. The policemen came and said I should leave the fountain. I answered them: “Mention the law in order I could obey it. What law did I break?” They did not mention the law, they handcuffed me and made me sit on the water pipes and electric cables within the fountain. For three hours I have been subjected to public tortures and degrading treatments in the sun, in pain and also with elements of sexual harassment. And there was no interference on either sides to get me out of that situation. Then they took me again illegally, they abducted me and took to Nubarashen psychiatric clinic.

With my hands and feet fastened I was tortured for three hours; women were beating and torturing me and men were watching and enjoying the scene. After the incident of the fountain it was very clear that people did not show signs of solidarity, much less, with a few exceptions. But I continue my free speech, my struggle just with words, but never with violence. I was a victim of violence, I suffered from violence but never replied the violence with violence. You have to be more powerful, because you have to face things that are very ugly, dirty and trampling one’s dignity. It was very difficult for me to overcome all these, but after you overcome injustices you are subject, you become more powerful, you know, and your power makes others give in.

I realise myself as a very dignified, powerful and proud human. I think no mortal can break me ever.”



**ՎԱՐԴԳԵՍ ԳԱՍՊԱՐԻ**
***իրավապաշտպան***

# ԵՍ ՀԱՎԱՏՈՒՄ ԵՄ.
# ԱՅԴ ՄԵԿ ՄԱՐԴԸ ԵՍ ԵՄ

«Ես Վարդգես Գասպարին եմ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Դա ամենակարևոր կարգավիճակն է, որ ես ունեմ: 2006 թվականին, երբ որ «Իմպիչմենտ» դաշինքը կար, կարգախոսը հետևյալն էր. Հայաստանի Հանրապետության ապագան կախված է մեկ մարդուց, և այդ մեկ մարդը դու՛ ես: Ես հավատում եմ. այդ մեկ մարդը ես եմ: Եվ այդպես հավատացել եմ 2005-2006 թվականներից: Երբ մարտի 1-ից հետո ես բանտում էի և մեկ տարի հետո դուրս էի եկել, Հյուսիսային պողոտայում էի առաջին օրը, տեղյակ չէի՝ ինչ է տեղի ունենում, ընդամենը կանգնած էինք, շարժման համախոհների հետ խոսում էինք, մեկ էլ տեսա, որ ոստիկանները թեանցում արած քայլում են առաջ և մարդկանց քշում-տանում են: Ես, բնականաբար, նահանջողը չէի և ոչ էլ ընդհարվողն էի: Եվ ակամա այդպես ստացվեց, որ ես պառկեցի գետնին: Դա առաջին դեպքն էր: Քաղաքացիական պայքարում շատ բան ես սովորել եմ Զարուհի Փոստանջյանից:

2016 թվականին, երբ Նուբարաշեն քրեակատարողական հիմնարկում էի, շատ դաժան էր: Ես կարող եմ ասել՝ այդ մի շաբաթը մի քանի տարի ինձ ծերացրեց: Դա արտաքինից չի երևում, բայց այնպիսի վերք է, որ երկար ժամանակ է պետք, որ ապաքինվի: Ինձ կտտանքների են ենթարկել, և ես չեմ ամաչում ասել, որ մի պահ խցի դուռը բացվեց, և ես դուրս նետվեցի և կալանավայրի միջանցքում ուղղակիորեն գետնի վրա սողալով գնում էի, քանի որ չէի կարող ոտքի վրա կանգնել: Դա պարտություն էր, ես ընդունեցի, որ այդտեղ այդ մարդիկ ինձ կարողացան կոտրել: Ես հիշում եմ Լեյլա Յունուսի բառերը՝ ինձ դարձրեցին գաղութի փոշի, հետևաբար ոչ մի հավակնություն չունեմ, որ ես անպարտելի եմ: Սակայն հետադարձ հայացքով երբ նայում եմ, նույնիսկ Նուբարաշենում անցկացրած իմ օրերը չէի ցանկանա փոխել արտասահմանում անցկացրած տարիներիս հետ: Սա իմն է: Սա այն տեղն է, որտեղ ես պատկանում եմ, և կարծում եմ, որ մեծագույն երջանկություն է նաև, երբ դու վգում ես, որ պատկանում ես մի տեղի և պատրաստ ես նվիրաբերել ամեն ինչ: Դա չափազանց թանկ կգացողություն է: Չեմ բացառում, որ ես էլի ակցիաներ անեմ, ուղղակի սա այն իշխանությունն է, որի ձևավորման մեջ ես մասնակցել եմ, աջակցություն եմ ցուցաբերել և ինձ կաշկանդված չեմ վգում իմ կարծիքը՝ դրական կամ բացասական ցույց տալ:

Երբ պետք լինի, իհարկե, կդրսևորեմ նաև իմ բացասական վերաբերմունքը: Չեմ կարծում, որ կարող է այնպիսի իրավիճակ լինել, որ ես հետադարձ անեմ իմ քայլերից: Կարող է իրավիճակից կախված մեթոդներս լինեն ավելի մեղմ կամ ավելի կոշտ, բայց չեմ պատկերացնում, որ հետադարձ քայլ կանեմ»:



**VARDGES GASPARI**
***Human rights defender***

# I BELIEVE I AM THAT PERSON

"I am Vardges Gaspari, citizen of the Republic of Armenia that is the most important state I do have. In 2006 when the "Impeachment" alliance was, the slogan was the following: "Our future depends on one person, and this person is you." I believe I am that person. I have been believing that idea since 2005-2006. After 1st of March 2008, after one year of imprisonment I was in the Northern Avenue and was not aware what was going on there, the people were standing there and talking, I began talking to the supporters of the movement and suddenly saw how the policemen were walking forward and "baying" the people by holding each other arm in arm. Naturally I planned neither to retreat nor to collide with them. So, I automatically lied down on the ground. This was the first time.

Many nuances of civil struggle I learnt from Zaruhi Postanjyan.
In 2016 when I was in Nubarashen [Penitentiary Institution], it was very hard; I can say that one week put several years on me. What happened to me was indescribable cruel.

No one can see my wound from outside, but it is too deep and needs much time to be healed. I was tortured in Nubarashen. I am not ashamed of saying that for a moment the door of my cell opened and I threw myself out. I threw myself out of the cell and began barely crawling along the corridor of the detention facility; I was crawling, because I could not stand on my feet because of many kicks I had got.

This was a throw-down, and nothing else. I accepted my defeat. People there could break my resistance. I always remember Leyla Yunus's words: "I was turned into prison dust."
So I'm not pretending to be invincible. When I retrospect, I would not even change the days spent in Nubarashen to the years I lived abroad.

This is mine. This is the place which I belong to. And I think for every person it is the greatest happiness when you feel you belong to a certain place and you are ready to sacrifice everything. It is quite a great and precious feeling.

I do not exclude I will make an action again. The issue is now simply the following - this is the authority, in the formation of which I also took part, I gave support to it, and I do not think I will ever be constrained to express my positive or negative opinion.

I do not feel myself tense; if necessary I will express also my negative attitude. I do not think there will ever be a situation that will make me do a step back.

Maybe depending on a situation my methods will be mild or tough, but I don't think I will ever take a step back."



**ԱՆԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ**

*ակտիվիստ*

# ԳՈՒՑԵ ԱՅՆՊԵՍ ՍՏԱՑՎԻ, ՈՐ ԵՍ ՊԱՐՏՎՈՂ ԴՈՒՐՍ ԳԱՄ, ԲԱՅՑ ԵՍ ԳՆԱԼՈՒ ԵՄ ՊԱՅՔԱՐԻ

«Ես Անի Հակոբջանյանն եմ, Կապանից եմ: Միշտ մեր տանը եթե ինչ-որ բան իմ ուզածով չի եղել ու ես ճիշտ եմ եղել, բարձրաձայնելով: Երբ տանը բարձրաձայնում ես ու ծնողներդ էլ ասում են՝ դու ճիշտ ես, պիտի լուծում ստանա այս հարցը, արդեն երբ հայտնվում ես մեծ միջավայրում, օրինակ՝ համալսարանում, ու դեկանը կամ ռեկտորը մի բան սխալ է անում, քո իրավունքները ոտնահարում է, էլի բարձրաձայնում ես: Ու հասկացա, որ եթե ես տանը խնդիր ունեմ, լուծվում է, մեր երկիրն էլ է մի մեծ տուն, ու այստեղ էլ պետք է բարձրաձայնեմ, ու պետք է լուծում ստանա այդ հարցը: Մայրս սկզբում դեմ էր, որ ես հեղափոխական ցույցերին մասնակցեմ, ասում էր՝ մասնակցիր, բայց մի գիշերի Ֆրանսիայի հրապարակում, մի մասնակցիր այն ցույցերին, որտեղ ընդամենը 5-6 հոգի կան: Այսինքն՝ ուզում էր, որ մասնակցեմ, բայց չէր ուզում, որ ես աչքի ընկնեմ, բայց հետո հասկացավ, որ ես միևնույնն է, պայքարելու եմ: Տարատեսակ ճնշումներ կային նաև շրջապատի մարդկանց կողմից, նաև ընկերներիս, համակուրսեցիներիս մեջ կային մարդիկ, ովքեր ասում էին՝ աղջիկ ես, ինչ գործ ունի աղջիկը գետնին պառկի, ճանապարհ փակի, բայց ուշադրություն չէի դարձնում: Հենց մամաս է ինձ այսպիսինը դաստիարակել: Ինքը միշտ ասում է, որ ես քեզ իմ հակառակն եմ եմ դաստիարակել, որ դու միշտ բարձրաձայնես, պայքարես, բայց դու այդ ամեն ինչն իմ դեմ ես օգտագործում: Ինքը ինձ միշտ ասել է, որ եթե մի բան սխալ է, դու ապատ խոսիր, բարձրաձայնիր: Ու հիմա ինքը դժգոհ է, որ ես իր դաստիրակածի պես եմ ստացվել: Ես վստահ էի, որ կստացվի, որովհետև եթե մի բան ուզում ես, ստացվում է: Օրինակ, Կապանում մի անգամ տրանսպորտի գներն էին փորձում թանկացնել, ընդամենը 5-6 հոգով երկու օր չէինք թողնում, որ թանկ վճարեն մարդիկ, ու տրանսպորտի գները իջան: Այսինքն, ինձ մոտ դեռ ինչ-որ հիասթափություն չէր եղել ու ավելի ոգևորված էի գնում պայքարելու: Ընկերս՝ Կարո Ղուկասյանն ասաց, որ պետք է մի բան անենք, որ ժողովրդին արթնացնենք, որ ցույց տանք, որ 5-6 հոգով կարելի է ինչ-որ բան փոխենք: Հարցրեց՝ կմասնակցե՞ս: Ասացի՝ հա, կմասնակցեմ: Չգիտեի էլ՝ ինչ պետք է անենք: Մի օր կանգեց, ասաց՝ շուտ արի Օպերա: Գնացի, տեսա վրաններով փակել են, միանգամից մտա վրանի մեջ: Այդ պահին չմտածեցի՝ ինչի համար ենք անում, որովհետև այդ պատճառներն արդեն տարիներ ի վեր կուտակվել էին, գիտեինք, թե ինչի համար ենք անում, որ լավ երկիր ունենանք, սովորենք նորմալ պայմաններ ունեցող միջավայրում, կաշառակերությունը վերանա այն միջավայրում, որտեղ անձամբ ես եմ սովորում:

Ու հասկացա, որ եթե ամեն մեկը ինձ նման վեր կենա, գնա պայքարի, ամեն ինչ կստացվի: Մարդիկ ասում են, որ պիտի ժողովուրդը համախմբվի, բայց իրենք նստում էին տանը ու առաջին քայլը չէին անում, որոշեցի, որ ես պետք է այդ քայլը անեմ ու հասկացա, որ ճիշտ եմ արել: Կուրսեցիներիցս շատերը ոգևորված, տեսնելով, որ ես ուղղակի ինչ-որ ճանապարհ փակելով կարողացա բան փոխել երկրում, եկան ու միացան պայքարին: Իսկ ինչո՞ւ ոչ ես: Եթե ես էլ Հայաստանի Հանրապետության սովորական քաղաքացի եմ, այստեղ եմ բնակվում, սովորում եմ այստեղ ու ինձ դուր չի գալիս այդ միջավայրը, եթե պայմաններն ինձ չեն բավարարում, ինչո՞ւ չպայքարեմ, որ լավ պայմաններում ես ապրեմ : Ես չեմ նահանջի: Մանամ ասում է՝ քեզ համալսարանից կհանեն: Ես ասում եմ՝ թող հանեն: Ինձ իսկապես պետք չէ սովորել մի համալսարանում, որն ինձ ինչ-որ բան չի տալիս: Ես գնում եմ համալսարան, ու ընդամենը մի քանի առարկա է, որ նորմալ դասավանդում են: Պայմանները շատ վատ են, գիր-գրականություն չկա, թող հանեն ինձ համալսարանից, ես կարևոր բանից չեմ զրկվում, մի հատ դիպլոմ է, դա էլ ինձ համար խնդիր չէ, բայց փոխարենը ես իմ խղճի առաջ պարզ կլինեմ, կիմանամ, որ ես պայքարել եմ: Ես Երևան չեմ եկել սովորելու մի համալսարանում, որ վարձ վճարեմ ու ոչինչ չսովորեմ: Այս պահին ինձ համար ամենակարևորը որպես քաղաքացի իմ խոսքը իշխանություններին հասցնելն է, ոչ թե գնալ համալսարան ու նստել դասերի, որոնք ինձ ոչինչ չեն տալիս: Համարում եմ ինձ անպարտելի այն առումով, որ ես մինչև վերջ գնալու եմ պայքարի, գուցե այդ պայքարը չհաղթեմ, գուցե այնպես ստացվի, որ ես պարտվող դուրս գամ, բայց ես գնալու եմ պայքարի: Թող պարտվեմ, ինչքան ուզում է հիասթափություններ լինեն, բայց ես չեմ պատրաստվում նահանջել»:



**ANI HAKOBJANYAN**
***activist***

# MAYBE I WILL NOT WIN, BUT I WILL NOT STOP STRUGGLING

"I am Ani, I am from Kapan. When something in my family was not the way I liked and I was right, I spoke it out and told my mom what I thought. When you speak at home and your parents say yes, you are right, and this problem shall be solved, you feel self-confident. So when you are in a larger environment, for example at university, and the Dean or the Rector does something wrong, violates your rights, you speak it out. I realised that when you have a problem at home and it is solved, so the problems in our country can also be solved as our country is also a big house and I must speak out when I have a problem in my big house and this problem shall also be solved. My mom was against my participation in these demonstrations. She said: "Ok, you may take part in it, but you do not need to spend a night in the French Square. You had better not to participate in demonstrations where only five-six people participate." I mean she was not against my participation; she just did not want me to excel. After a while she understood that she should not interfere, I will struggle anyway. There were different types of pressure also by my acquaintances, by the elder ones. Some of my friends and classmates said: "You are a girl. A girl should not lie down in the street and close a street." But I was ignoring their criticism.

My mom brought me up like this. She always says this: "I brought you up in a way on the contrary to the way I have been brought up, in order you could speak out, you could struggle, but sometimes you turn against me." I mean, she taught me to speak freely, to speak out if I found something wrong, and now she was displeased with the way she brought me up. I was sure the things would play out that way, because if you want something, it turns out. For example, once local governors tried to increase the prices of the transport in Kapan, and when we, with five-six people, did not allow the people to pay these high prices for two days, the prices were off. I mean by that time I had not had any disappointment yet and I was more enthusiastic to participate in it.

One of my friends, Karo Ghukasyan, said we should do something to awaken people, to show them it is quite possible to change something with even five-six people. He offered me to take part in whatever they decided to do and I agreed without knowing what they were planning to do. And one day he called me and said I should hurry up to Opera. I went to Opera and saw they had closed the street by a tent and I entered into the tent immediately without thinking why I did it. Because these reasons were accumulated during many years and we knew why we did it. We wanted to have a better country, we wanted to study at a university with normal conditions, and we wanted to eliminate the corruption in the university I studied in. I realised if everyone could stand and struggle like me, everything was going to be all right.

I wanted to be an example for people who told that people had to unite but they did not start the ball rolling. I decided to be the first and understood I was right, because many of my classmates got excited seeing that I could change something in this country by just closing a street which was not something impossible. They came and joined our struggle. But why not me? If I am an ordinary citizen of the Republic of Armenia, I reside here, study here and I do not like the atmosphere, the conditions do not meet my requirements, so why should not I struggle for living in better conditions. I will not retreat. My mom told me I am going to be kicked off the university. I said I was ready to be kicked off; I really did not need to study at a university where I get nothing to learn. I attend a university and there are just a few lecturers who teach their subjects in a proper way. The conditions are really awful, there are no books, no literature. So I am not afraid of being kicked off, I have nothing to lose. Just a diploma is not a problem for me. Instead, I will be pure within; I will know I have struggled. I have not come to Yerevan to study at a university to which I will pay a fee and get nothing instead. At the moment, the most important thing for me, as a citizen, is to make my voice audible for the authorities and not to attend to lectures which give me nothing.I consider myself invincible as I am going to struggle till the end. Maybe I will not win, maybe I will be the losing side, but I will not stop struggling. Let me lose, let me face different disappointments, it does not matter, I will never retreat."



**ԱՆՈՒՇ ԼԱԼԱՅԱՆ**
***ակտիվիստ, քաղաքական գործիչ***

# ՄԵՆՔ ԳԻՏԵԻՆՔ, ՈՐ ՄԵԶ ԲԱՆՏԱՐԿԵԼՈՒ ԵՆ, ՊԱՏՐԱՍՏ ԷԻՆՔ ԴՐԱՆ

«Ես Անուշ Լալայանն եմ: Փոքր տարիքից եղել եմ ըմբոստ, ինձ սովորեցրել են, որ եթե մի բանի ուզում ես հասնել, պիտի գնաս մինչև վերջ ու երբեք չկոտրվես ոչ մի բանից: Հիմա փորձում եմ զբաղվել քաղաքականությամբ, ակտիվ մասնակցություն ունենալ քաղաքական կյանքին, ինչ-որ փոփոխություններ մտցնել: Անցած տարի առաջադրվել եմ որպես պատգամավորի թեկնածու, ունեցել եմ առաջին փորձս քաղաքական դաշտում ու հասկացել եմ, որ շատ բաներ փոխելու կարիք կա: Ինչո՞ւ ես. եթե ոչ ես, ապա ո՞վ: Ինձ թվում է՝ ես իմ ակնվությամբ և հետևողականությամբ ոչ մեկի չեմ զիջում ու ես կարող եմ: Ուղիղ 10 տարի առաջ՝ 2008 թվականին, ես Հանրապետության Հրապարակում հաղադուլ եմ արել: Այն ժամանակ ավելի երիտասարդ էի, լավ չէի հասկանում տնտեսական կապերն ու այլ հարցերը, ինձ դուր չէր գալիս, որ առանց նախապայմանների պետք է Թուրքիայի հետ սահման բացվի: Հիմա կարծիքս մի քիչ փոխվել է, որովհետև մեծացել եմ, ավելի շատ եմ ծանոթացել համակարգին, հասկացել եմ՝ ոնց է դա աշխատում: Այդտեղից է սկսվել իմ ակտիվիզմը: Կարծում եմ, որ ամեն մարդու համար ամենաբիրտ ճնշումն այն է, որ իր ընկերները փողոցում տեսնում են ու ասում՝ «էլի միտի՞նգ եք անում, միևնույնն է՝ բան չի փոխվելու»: Այդ խոսակցություններն այնքան են եռում, որ դու ինքդ թեև ուզում ես պայքարել, գնում ես ցույցերին, բայց մարդկանց վերաբերմունքն այդ ամեն ինչին շատ քննադատական է լինում, ու շատերը նեղվում են դրանից, սկսում են չասել, որ իրենք ցույցերի են մասնակցում: Տհաճ է չէ, որ քո հարազատ մարդիկ անընդհատ հիշեցնում են, թե դուք ակտիվիստ եք, անընդհատ բողոքում եք:

Ամենամեծ հետապնդումն իմ նկատմամբ եղել է այն, որ ոստիկանները եկան մեր տուն, իմ բանկային հաշիվը հենց այդ օրը արգելափակվեց: Իրենք ուզում էին ինչ-որ մի բան անել, որպեսզի հիմք ունենան ինձ ձերբակալելու համար: Իմ մոտիկ ընկերներից մեկին ձերբակալեցին, հետո սկսեցին բոլորին հերթով ձերբակալել, վտանգ կար, որ ինձ էլ կձերբակալեն: Ես գնում էի գլխարկով, փակում էի դեմքս, բայց գնում էի անպայման ցույցերին, մտածում էի՝ եթե բռնեն էլ, բան չի լինի: Պատրաստվում էինք, հիշում եմ, այդ օրերին հատուկ պայուսակով էինք գնում ցույցերին՝ կարծելով, որ ամեն օր կարող են ձերբակալեն: Որպես քաղաքական ակտիվիստ մենք ձախողումների ու տապալումների փորձ ունեինք:

Ես ինքս մտածում էի, որ եթե այս անգամ էլ չստացվի, ես արդեն շատ կհիասթափվեմ այս իրավիճակից, որովհետև չես կարող դու 10 տարի պայքարել, ու ոչինչ չփոխվի: Դրա համար մենք որոշեցինք ռուսերեն ասած գնալ "Ва-банк", այսինքն՝ խախտելով օրենքներ, արագաչափ փակել, առանց վախենալու, հենց ոստիկանների ներկայությամբ: Մենք գիտեինք, որ մեկ բանտարկելու են, պատրաստ էինք դրան, մեկնից ոչ մեկ չէր վախենում: Եթե պայքարում ես, պիտի ամբողջը դնես նժարի վրա և վերջ, որովհետև հետ դարձի ճանապարհ չպիտի ունենաս»:

Եթե մի բան անում ես, պիտի անես դուխով, վստահ ու մինչև վերջ: Իրականում ես ոչ մի բանից չեմ վախենում, երևի շատ քիչ բան կա կյանքում, որից ես կվախենամ: Այս պայքարում ես անպարտելի եմ, եթե դա իմ պայքարն է, ուրեմն ես անպարտելի եմ:





**ANUSH LALAYAN**
***activist, politician***

WE WERE READY
TO BE ARRESTED,
WE WERE AWARE
IT COULD HAPPEN

"I am Anush Lalayan, I try to deal in politics, actively participate in political life and make some changes. Last year I was nominated as a candidate for deputy. I had my first experience in the political sphere and learnt that there are many things to be changed.

Why me? Who else, if not me? I believe that my activeness and perseverance stands second to none and I think I can. Precisely ten years ago, in 2008, I went on a hunger strike in the Republic Square. At that time I was awhile younger and did not understand much about economic affairs, etc. There was an agreement with the Turks that suggested opening of the borders, and I did not like the idea that the borders are going to be open without any preconditions.

Though now I have changed my opinion a little, because I have grown up and now I have got acquainted with that system, with the way it works. But at that time I went on a hunger strike and that was the start of my activity. I think for every person the strongest and roughest thing is when his/her friends or acquaintances see him/her in the street and ask: "Do you stage a demonstration again? What do you want this time?" or "It's enough. It is all the same, you cannot change anything." These conversations are so booming that make you wish to struggle and you go to participate to demonstrations, but those conversations and their attitude towards all this has a very critical character. Many people get offended and conceal that they are taking part in a demonstration, because it is not pleasant that your closest friends remind you all the time that you are an activist. They say: "Of course you always complain of something. What are you complaining of this time?" They say such things without having a notion of the reasons.

As the strongest "persecution" I can mention that recently the Police visited my house and just that day my bank account was blocked in an incomprehensible manner. It means they wanted to do something to have grounds to arrest me.

They arrested one of my close friends and then arrested everybody in turn. I had the fear of being arrested, but, anyway, I went to demonstrations with a cap on my head, with my face closed. I thought nothing will happen even if I would be arrested. We were getting ready.

I remember those days, how we were preparing our bags thinking that the next day or the other day we were going to be arrested. As political activists we already had the experience of failure, throw-down. Most of us thought if we fail also this time, we would be very disappointed from this situation, because that would be no fair to struggle ten years and achieve nothing.

So we decided to go "all in". By violating the laws, we closed the speedometers just with the policemen, without having fear that we could be arrested. I mean all of us were ready to be arrested, we were aware it could happen. None of us was afraid of it, we clearly realised we would be in freedom maximum for a day or two and that no one will help us when we are arrested.

When one struggles, he/she has to put everything on a scale and save his/her fight. One should have no turning back. Yet in childhood I was disobedient. I was grown up in a way that if I want something I should fight for it till the end and nothing can make me get disappointed. Anything you do, you should do hardily and reliant, if you are sure of it, and, of course, you should keep struggling till the end. That is why I have no fear about anything. Actually, there are very few things I can be afraid of in my life.

I am invincible in this struggle. If this is my struggle, that means I am invincible."



**ԱՆՏՈՆ ԻՎՉԵՆԿՈ**

*ակտիվիստ*

# ԵՍ ՓՈՔՐ ԺԱՄԱՆԱԿ ԿՐԵԼ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅ ՉԼԻՆԵԼՈՒ ՍՏԻԳՄԱՆ

«Ես Անտոն Իվչենկոն եմ: Ես այն մարդն եմ, որը ուղղակի անընդհատ փորձում է գործընթացներին մի կողմից մասնակցել, մյուս կողմից հետևել, որովհետև դա իմ ամենամեծ մոլուցքներից է՝ հասկանալ հասարակական գործընթացներով: Հիմնականում դրանք ինչ-որ նախաձեռնություններ են, որոնք բողոքն են փորձում տեղ հասցնել: Դրանք կարելի է ձևակերպել որպես հանուն սոցիալական արդարության բողոք: Այն թեմաները, որոնք ինձ հետ քիչ էին առնչվում, ես փորձում էի շատ չմասնակցել, փորձել եմ ընտրել այն թեմաները, որոնք ինձ հետ հաղորդակցվում են, որպեսզի դա լինի նաև իմ բողոքը, որպեսզի ես անկեղծորեն գնամ ու խոսեմ դրա մասին: Ես կարծում եմ, որ դա իմ ընտրությունը չէ, ինչ-որ չափով դետերմինացված գործընթաց է, որովհետև ես չէի կարող չլինել այն մարդը, որը չի կարող լինել անտարբեր, որովհետև ես փոքր ժամանակ  կրել եմ Հայաստանում հայ չլինելու ստիգման: Ուղղակի հայ չլինելը կարող է նշանակել, որ շատ վատ տղայական կռիվների ժամանակ քո հանդեպ կարող է լինել այլ վերաբերմունք, քո խոսքի հանդեպ՝ «հա դե պարզ է, դու ռուս ես» (մինչդեռ ես ռուս էլ չեմ) կամ ասում են. «Դու հայ չես, փաստորեն դու չես հասկանում այստեղի կանոնները, դրվածքը, մշակույթը, արժանապատվության մասին գաղափարն էլ քեզ համար այդքան ուժեղ չի»: Ու հասկանում ես, որ մի բան այն չէ: Սկզբում չես հասկանում, բայց հետո սկսում ես հասկանալ: Բայց Հայաստանի հասարակության մեջ կան ազգությամբ եզդիներ, հույներ, ուկրաինացիներ, ռուսներ:

Երբեք ինձ մոտ հարց չի ծագել, թե իմ պայքարից որ ազգ է շահելու: Ես այստեղ ծնվել եմ, այստեղ մեծացել եմ ու պատրաստվում եմ դեռևս այստեղ ապրել: Ցանկացած շարժում, որը հանուն սոցիալական արդարության է, որը ես տեսնում եմ, որ պետք է բարելավի քաղաքական իրավիճակն այն միջավայրում, որտեղ ես եմ ապրում, նաև իմ պայքարն է: Բռնություն հիմնականում ոստիկանության կողմից է եղել: Ցանկացած իրավիճակում, երբ դու ընկնում ես մարդու ձեռքը, ով ունի քո հանդեպ իշխանություն ու այդքան էլ լավ չի հասկանում, թե ինչ պիտի անի այդ իշխանության հետ և քեզ հետ, ինքը բռնություն է գործադրում քո դեմ՝ իր ամբողջ լարվածությունն ու չբավարարվածությունը (սոցիալական կամ էմոցիոնալ) ուղղակի շուռ է տալիս քո դեմ: Արդյո՞ք վգացել եմ խտրականություն. երևի միայն աշխատանքի մեջ եմ վգացել ու դրա պատճառով չդարձա լրագրող: Բախտս չբերեց, երկու տեղ փորձեցի աշխատել, երկու տեղերից էլ դուրս եկա արագ, քանի որ ինձ փորձում էին բացատրել, որ այս նյութը պետք է անես, իսկ այն մեկը՝ ոչ: Ամենածանրը մի դեպքն էր, երբ եզդիական գյուղը նախագահականի դիմաց ցույց էր անում՝ պահանջելով փոխել գյուղապետին: Ես ուղղակի նկարել էի այդ ակցիան, ասացին՝ չէ, մենք նախագահականի դիմացի ակցիաները չենք լուսաբանում: Իմ կարծիքով՝ ցանկացած ԶԼՄ-ի համար շատ կարևոր պետք է լինի ներկայացնել ամենաանտեսանելի փոքրամասնության բողոքը: Մի ամբողջ գյուղ եկել-հասել էր նախագահականի դիմաց, ինձ ասում են՝ չէ, մենք դա չենք լուսաբանելու, որովհետև կպնում է նախագահին: Այդպես աշխատանքից դուրս եկա ու դրանից հետո չփորձեցի լրագրող լինել: Դանիելյան Միկան ասում էր, որ իրավապաշտպան լինելը հոգեվիճակ է ու ապրելու ձև: Ես համաձայն չեմ, ես կարծում եմ, որ ուղղակի ինչ-որ իրավիճակներ են լինում, երբ մենք ապրում ենք՝ չմտածելով իրավապաշտպանության կամ պայքարի մասին, բայց արդյունքում դա դառնում է պայքար: Դու որոշումներ ես կայացնում ոչ թե հանուն հասարակության, այլ որովհետև այլ կերպ չես կարող: Ակտիվիզմը վախենալու չէ, ես չեմ ուզում, որ այն լինի փոքր խմբի մասնագիտություն, որովհետև մենք տեսանք, որ 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին գրեթե բոլորը դարձան ակտիվիստ, իրավապաշտպան, լրագրող, ու դա բերեց իրավիճակի փոփոխությանը: Որքան իրավապաշտպանությունը դառնում է նեղ շրջանակների մասնագիտություն, այդքան քաղաքացիական հասարակությունը թուլանում է»:



**ANTON IVCHENKO**
*activist*

# AT MY EARLY AGE I BORE THE STIGMA OF BEING A NON-ARMENIAN IN ARMENIA

"I am Anton. I am the person who simply tries to permanently take part in the processes on one hand and to follow them on the other hand, because it is one of my greatest manias - to understand the processes taking place within the society. These are mainly initiatives which try to deliver the protest.

Nearly each of these initiatives can be formulated as a protest for the sake of social justice. I tried not to take part in the themes which had nothing to do with me. I always tried to find something that concerned me in order it could be also my protest, in order I could go, honestly participate and speak out about it.
I do not think it is just my choice, it is somehow a determinated process, that is to say I could not be the person who could be indifferent, because at my early age I bore the stigma of being a non-Armenian in Armenia.

Being a non-Armenian may mean a situation when you face a different attitude during serious boyish fights, your word has a different impact. They say: "O, of course, you are a Russian."I am not even a Russian. They said "You are not an Armenian, so you do not understand the rules, procedures, culture, etc. existing in here. Concepts about dignity are not so strong for you." And you understand that something is wrong. At first you do not understand, later you realise. The Armenian society is the society of the Republic of Armenia which contains people of various nationalities, such as Yezidi, Greek, Ukrainian, and Russian. I have never asked me which nationality will benefit from my activism. I was born here grew up here, and yet I am going to live here. Any movement concerning common justice, when I see it will make the civil life and anything in which I am, better, is my movement.

Actually I faced violence just by the police. But it is the police; many people may have faced violence by them, not only the activists.

In any situation when you appear in the hands of people who have power over you and do not clearly understand what they are to do with both the power they have, and with you, they will apply violence against you. They will direct all the anger, stress and social or emotional dissatisfaction they have towards you.

When I try to answer the question have I faced discrimination as an activist; I will say it was connected just with my work. I did not succeed and did not become a journalist. I tried to work in two places, but I left these places very soon. Because they explained to me which topic I should cover and which one I should not.
And the hardest case for me was when a whole village of Yezidi people gathered in front of Baghramyan 26, they claimed to change their Village-governor. I just made a video of that action, but I was told they did not cover the actions organised in front of the Presidential seat.

I think it is very important for any mass media to present the claim of the most unnoticeable minority. A whole village came to Yerevan, and I was told they did not cover it, because it touched the President. So I left also that workplace and did not try to become a journalist ever again. Mika Danielyan told me that being a human rights defender was a psychological state, a life-style.

I do not think that way. I think we just face situations when we live without thinking about right protection, about struggles, and as a result it really becomes a struggle.

You make decisions not for the sake of society, but for the reason you cannot do otherwise. Activism is not something one should fear from. I do not want it to be a profession for a small group of people. Because what happened in the latest months made everyone an activist, a human rights defender, a journalist. And it brought to a change of the situation.

The more it becomes a profession of narrow framework, the more human rights defense becomes a professional work, the more the civil society becomes weaker."



**ԱՐԹՈՒՐ ՍԱՔՈՒՆՑ**
*Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի*
*Վանաձորի գրասենյակի նախագահ*

# ՄԵՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՉԵՆ ԻՆՉ-ՈՐ ԾՐԱԳՐԵՐՈՎ, ԹԵԵՎ ՇԱՏ ՀԱՃԱԽ ԱՅԴՊԵՍ ԵՆ ՄՏԱԾՈՒՄ

«Ես Արթուր Սաքունցն եմ, զբաղվում եմ իրավապաշտպանությամբ: Զբաղվել ասելով՝ նկատի ունեմ, որ ոչ միայն ուղղակի գործունեության կամ աշխատաժամանակիդ մեծ մասը տրամադրում ես ինչ-ինչ քայլեր կատարելուն, այլև ժամանակ ես տրամադրում վերլուծելու, նաև որոշելու, մտածելու համար, թե ինչ քայլեր կատարես: Գործողություններն ինքնին պայմանավորված չեն ինչ-որ ծրագրերով, թեև շատ հաճախ այդպես են մտածում: Ծրագիրն ինքը գաղափար է, որը ձևակերպում ես և այդ գաղափարի իրականացման, գաղափարին կամ այդ նպատակին հասնելու համար ինչ-որ քայլեր ես ձեռնարկում, որոնք կարող են ընթացքում լրացուցիչ հնարավորություններ բացահայտել: Այսինքն՝ սա, ըստ էության, կարելի է ասել, հետազոտական աշխատանք է: Հետազոտություն, խնդիրների ձևակերպում, որոնք վերաբերում են հենց մարդու իրավունքների դաշտին, վերաբերում են ժողովրդավարությանը, վերաբերում են քաղաքացիական հասարակությանը: Ռեժիմները փոխվում են, կառավարությունները փոխվում են, անձնակազմերը փոխվում են, բայց երբ դու անընդհատ մի վիճակի մեջ ես, որը կոչվում է մարդու իրավունքների պաշտպանության գործունեություն, ապա դա նաև հետադարձ քեզ մոտ դաստիարակում է որոշակի մոտեցումներ, ամրագրում է որոշակի մոտեցումներ, մտածելակերպ:

Այնպես չէ, որ ծնվում ես այդպիսին: Մենք չենք ծնվել այդպիսին: Մենք էլ ենք ունեցել մեր ֆոբիաները, մենք էլ ենք ունեցել մեր կրթության հետ կապված բազմաթիվ թերություններ:

Բայց իմ համոզմամբ՝ հիմնական այդ ազդակը, հիմնական այդ շարժիչը, որը մարդուն հանգեցնում է կամ բերում է իրավապաշտպանության դաշտ, առաջին հերթին անտարբեր չլինելն է:
Խոսքը նաև գիտակցված ընտրության մասին է՝ չնայած իր բոլոր մարտահրավերներին, որովհետև նույնիսկ ինչ-որ խնդիրների մասին խոսելը կարող է ինքնին բավական վտանգավոր լինել: Այսինքն՝ չթույլատրված կամ չընդունված թեմաներով խոսելը կամ չընդունված մոտեցումներ, գնահատականներ արտահայտելն ինքնին կարող է թե՛ հանրային, և թե՛ տարբեր հարթակներում հանգեցնել այնպիսի ուժերի բախման, այնպիսի գնահատականների, որոնք ինքնին սպառնալիք են հանդիսանում: Ճնշումներ միշտ են եղել: Առաջին անգամ, իհարկե, շուտ էր՝ 2003 թվականին, երբ գրասենյակը հրդեհեցին: Ընդ որում, գրասենյակի նկատմամբ ոտնձգություններ միշտ են եղել: Սպառնալիքները միշտ են լինում՝ սպանելու կամ «մահի» կոչերով: Դրանք պարբերաբար են եղել: Դու չես կարող կանխատեսել, թե ինչ կարող են անել: Վերջիվերջո դու ունես ընտանիք, դու ունես միջավայր, դու ունես բարեկամներ կամ ընկերներ և այլն: Եղել են դեպքեր, երբ նույնիսկ քաղաքացիները ռիսկ չեն արել մոտենալ գրասենյակին կամ ընկերները չեն համարձակվել բարևել:

Ես հասկացել եմ, որ դա իրենց համար «ապահով չէ»: Ճնշումներին դիմակայելու համար պետք է ոչ մի անգամ չնահանջես քո դիրքերից: Փոքր-ինչ նահանջը, անկայունությունը, անվստահությունը կամ կասկածամտությունը՝ քո մտքի կամ քո դիրքորոշումների վերաբերյալ, հակադարձողների մոտ անմիջապես կառաջացնի վստահություն, որ դու վստահ չես քո սկզբունքների վրա»:





**ARTHUR SAKUNTS**
***President of Helsinki Citizens Association Vanadzor Office***

# OUR ACTIONS ARE NOT CONDITIONED BY SOME PROJECTS, THOUGH PEOPLE OFTEN THINK SO

"I am Arthur Sakunts, I'm dealing with human rights. When I say "to deal with" I mean, not only spend most of your work time on taking some steps, doing some activities, but also taking time to analyze, decide, also to think about what to do.

Because our actions are not conditioned by some projects, though people often think so. The project is itself an idea that you formulate and take some steps to achieve that idea or to achieve that goal, which may reveal additional opportunities during the course.

In other words, this is essentially a research job; research, formulation of issues that relate to human rights, refer to democracy, refer to civil society.

The regimes change, governments change, staffs change, but when you're constantly in a situation called human rights protection, it also brings you back some approaches, fixes some attitudes, mentality.

No one is born like he/she is at the moment. We are not born like we are today. We also had our phobias, and we had many drawbacks related to our education, because education may not be ideal in anywhere.

But I am convinced that the main impetus, the main engine, which leads or brings to the sphere of human rights protection is not to be indifferent first of all.

It's also about a conscious choice, despite all of its challenges, because even talking about some issues can be quite dangerous.

In other words, speaking on unpermitted or unacceptable subjects, or expressing unapproved approaches or evaluations, can lead to a conflict of forces both in public and in various platforms, which may itself become a danger.

There were always pressures. For the first time, of course, it was early, in 2003, when the office was burned. Moreover, there have always been





harassments against the office. Threats are always present in our life by calls either "to kill" or "to cause death".

They have a regular nature. You cannot predict what they can do. Finally, you have a family, you have an environment, you have relatives, friends, etc. There were cases when even the citizens did not risk approaching the office or friends did not dare to salute.

I have realized that this is not so safe for them. But the human rights community is still quite strong in Armenia.

To be protected you have to demonstrate publicity, justification and legitimacy. You should never take a back step from your position. A slight retreat, instability, distrusts, or suspicion to your thoughts or opinions can and will immediately cause confidence among those who are against you that you are not sure about your principles."



**ԲՈՐԻՍ ՄՈՒՐԱԶԻ**
***Լրագրող, «Սինջար» եզդիների ազգային միավորում հասարակական կազմակերպության նախագահ***

# ԵԹԵ ՄԱՐԴԸ ՏԵՍՆՈՒՄ Է ԽՆԴԻՐ, ԲԱՅՑ ՉԻ ԽՈՍՈՒՄ ԱՅԴ ՄԱՍԻՆ, ԱՊԱ ՆԱ ՇԱՏ ԱՎԵԼԻ ՎԱՏ Է ՎԱՐՎՈՒՄ, ՔԱՆ ԱՅՆ ՄԱՐԴԸ, ՈՎ ԽՆԴԻՐ Է ՍՏԵՂԾՈՒՄ

«Ես Բորիս Մուրադին եմ: Ներկայացնում եմ «Սինջար» եզդիների ազգային միավորումը: Դեռ դպրոցական տարիքից, երբ մեր սերնդի ժամանակ ներդրվեց «Մարդու իրավունքներ» առարկան, ինձ շատ դուր եկավ դա, որովհետև ամեն թեմա շատ կարևոր էր ինձ համար ու նորություն էր, նախկինում մենք չգիտեինք մարդու իրավունքներն ինչ է: Դեռ դպրոցից ես ուզեցի զբաղվել հասարակական քաղաքական գործունեությամբ: Մեկ տարի սովորելուց հետո համալսարանում գնացի զինվորական ծառայության: Զինվորական ծառայության ընթացքում ավելի եկա այն համոզման, որ պետք է զբաղվել հասարակական գործունեությամբ, որովհետև մասնավորապես եզդիներին վերաբերող հարցերի քննարկումները, եզդիների մասին պատկերացումները հիմնականում շատ կենցաղային էին: Ես ինքս ինձ համար որոշել էի, որ պետք է մենք փորձեինք իրավիճակ փոխել, փորձեինք մարդկանց ցույց տալ, որ եզդիները չպետք է ասոցացվեն անասնապահության, անգրագիտության ու հետամնացության հետ: Այս տարիների ընթացքում կազմակերպությունը շատ աշխատանք է հասցրել անել: Մեր կազմակերպություն մարդիկ եկել են, գնացել են, բայց այն գաղափարները, որ կային մեզ մոտ, մնացել են, այն, որ մենք յուրաքանչյուրս եզդիների դեսպաններն ենք մեր շրջապատում, մեր ընկերների շրջապատում, մեզ ճանաչողների շրջապատում և այն տեղերում, որտեղ մենք ընդհանրապես լինում ենք: Կարծում եմ այս առումով ստացվեց, և մեր կազմակերպության բազմաթիվ անդամներ տարբեր տեղերում հաջողությունների են հասել և կարողացել են ավելի ճիշտ ներկայացնել, թե ովքեր են եզդիները:

Խնդիրներ շատ են եղել և՛ համայնքի կողմից, և՛ իշխանությունների կողմից: Օրինակ Հայաստանի իշխանությունների և մեր համայնքի համար անհասկանալի էր, թե ես ու իմ մի քանի ընկերներն ինչու ենք հիմնել լրատվական կայք, հայկական, ոչ եզդիական ու ոչ եզդիների խնդիրների մասին: Այդ առումով ճնշումներ շատ են եղել, եղել են նաև սպառնալիքներ: Օրինակ, առաջինը մեր լրատվական կայքը հրապարակեց 1994 թվականի մի տեսանյութ, որտեղ նախկին նախագահ Սերժ Սարգսյանը (այդ պահին Պաշտպանության նախարար) քրեական հեղինակությունների հետ Մոսկվայում ճաշկերույթի էր մասնակցում: Քրեական հեղինակություններն ազգությամբ եզդի էին, և հենց այդ տեսանյութը հրապարակեցինք, ահավոր մեծ ճնշումներ սկսեցին՝ Ֆեյսբուքով ամենատարբեր սպառնալիքներ: Ես գիտեի՝ այդ ամենը որտեղից էր ղեկավարվում: Անցան արդեն իմ ընտանիքի անդամներին, սպառնալիքներ էին գրում, գրառումների վրա նշում էին կնոջս, որ ինքը կարդար, կապվում էին Ռուսաստանի տարբեր եզդիների հետ և այդ ինֆորմացիան խեղաթյուրված ներկայացնում էին, որպեսզի նրանք էլ այնտեղից զանգեին կամ գրեին: Ու էլի շատ ճնշող բաներ: Բայց ես դիմացա, ու մենք այդ տեսանյութը մինչև վերջ պահեցինք: Աբսուրդային իրավիճակ է, երբեք չեմ պատմել, բայց եզդի կրիմինալ հեղինակությունը զանգում և ասում է. «Գիտե՞ս, Վովան (նախկին Ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը) իմ եղբայրն է, ինչպե՞ս ես դու նրա մասին այդպիսի բան գրում»:

Ես կարծում եմ՝ եթե դու որոշել ես որևէ գործունեությամբ զբաղվել, ապա պետք է պատրաստ լինես նաև ճնշումներին դիմակայելուն: Ես միշտ ինձ այդ հարցն եմ տվել. եթե ես չեմ այս խնդրի մասին խոսելու, ապա ո՞վ է խոսելու: Ինձ համար դա մեծ հերոսություն չէ, բայց ես կարծում եմ, եթե մարդը տեսնում է խնդիր, բայց չի խոսում այդ մասին, ապա նա շատ ավելի վատ է վարվում, քան այն մարդը, ով խնդիր է ստեղծում, որովհետև խնդիր ստեղծող մարդը խնդիր է ստեղծում այնքան ժամանակ, քանի դեռ չկա դիմադրություն: Իսկ երբ դու չես ճնշվում կամ ցույց չես տալիս, որ ճնշվում ես, գուցե վախենում ես, գուցե մտավախություններ ունես, գուցե խնդիրներ ես տեսնում քեզ համար, բայց թույլ չես տալիս դիմացինին հասկանալ, որ ինքը կարողացել է քեզ վրա որևէ կերպ ազդել, դրանով դու թուլացնում ես նրան, նա թուլացնում է ճնշումը: Իսկ եթե արձագանքդ մի քիչ այնպիսին եղավ, որ նրանք հասկանան, որ իրենց ճնշումը տեղ է հասել, ուրեմն ճնշումն ավելի է մեծանալու, որովհետև նրանց նպատակը հենց դա է, որպեսզի ճնշման միջոցով քո վերաբերմունքը կամ քո մոտեցումը փոխեն»:



**BORIS MURAZI**
***journalist, president of "Sinjar" National Unity of Yezidis NGO***

# IF A PERSON SEES A PROBLEM, BUT DOES NOT TALK ABOUT IT, SHE BEHAVES WORSE THAN A PERSON WHO CREATES A PROBLEM

"I am Boris Murazi. I represent "Sinjar" National Unity of Yezidis. From the school age, when the subject of "Human Rights" was introduced to our generation, I liked that subject because every topic was very important to me. It was something new; we did not know what human rights were before that subject was introduced. Yet from the school age I wanted to engage in public political activities. After a year of study at the university I entered the army to do military service. During my military service, more and more I came to the conclusion that I had to engage in public activities. Because discussions of issues concerning particularly the Yezidis were mostly domestic; and the notions about the Yezidis were the same. I decided for myself that we should try to change the situation and try to show people that the Yezidis should not be associated with cattle breeding, illiteracy and backwardness.

Over the years, the organization has done a lot of work. A lot of people entered into and left our organisation, but the concepts we had - that each of us is the ambassador to the Yezidis within our neighbourhood, within the neighbourhood of those who know us and in places we generally visit - remained unchanged. I think we managed it. Many members of our organisation have succeeded in various places and have been able to present more accurately who the Yezidis are. There were many problems with both the community and the authorities. For example, for the Armenian authorities and our community it was not clear why my friends and me have set up a news website, which was Armenian, non-Yezidi and did not touch upon the problems of the Yezidis. In that sense, there were many pressures, there were also threats. For example, our news website was the first which released a video material dating 1994, where former President Serzh Sargsyan (Minister of Defense at that moment) was present at a dinner party with criminal authorities in Moscow. The criminal authorities were of Yezidi nationality. We have just released that video, when terrifying pressures were applied upon us with many different threats on Facebook. I knew where it was headed from.
They turned to my family members and wrote threatening things; they mentioned my wife's and my friends' names in the comments in order they could read those threatening. They got in touch with various Yezidis in Russia, and misinformed them in order they could call or write from there; and many other overwhelming things. But I did it, and we kept that video material up to the end.

The situation runs to the absurd; I have never talked about it so far. A Yezidi criminal calls and say: "You know, Vova (former Head of Police Vladimir Gasparyan) is my brother, how have you dared to write such things about him?"
I think if one has decided to engage in any activity, he/she should be ready to overcome the possible pressures. I have always asked that question: "If not me, who else will talk about any issue?"

I think if a person sees a problem, but does not talk about it, he/she behaves worse than a person who creates a problem. Because the problem creator creates a problem as long as there is no resistance. If you are oppressed, the pressure will increase.

But when you are not oppressed or do not show that you are afraid, maybe you worry, maybe you see problems for yourself, you do not allow the others to understand that they have been able to influence you in any way; you make them weak and they weak the pressure.
And if your reaction is such that they realise that their pressure has achieved the goal, then the pressure will increase. Because their purpose is to change your attitude or your approach through pressure."



**ԴԱՆԻԵԼ ԻՈԱՆՆԻՍՅԱՆ**
*իրավապաշտպան, «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող*

# ԵՍ ՄԻՇՏ ԻՆՁ ՀԱՐՑ ԵՄ ՏԱԼԻՍ. ԻՆՉՊԵ՞Ս Է ՍՏԱՑՎՈՒՄ, ՈՐ ՄԱՐԴԻԿ ԱՆՏԱՐԲԵՐ ԵՆ

«Ես Դանիել Իոաննիսյանն եմ: Ես ինձ հիմնականում ներկայացնում եմ որպես մարդ, որը փորձում է ինչ-որ օգտակար բաներ անել: Ես միշտ ինձ հարց եմ տալիս. ինչպե՞ս է ստացվում, որ մարդիկ անտարբեր են, այդ մեկն ինձ համար հասկանալի չէ: Ես չեմ կարող պատասխանել այն հարցին, թե ինչու ես անտարբեր չեմ, որովհետև դա բնական-տրամաբանական վիճակ է, դու չես կարող անտարբեր լինել:  Ես միակը չեմ, ով անտարբեր չէ:

2017 թվականին մենք մի հետաքրքիր հետաքննություն արեցինք ապացուցելու համար, որ դպրոցներում, մանկապարտեզներում տնօրենները Հանրապետական կուսակցության օգտին են աշխատում: Դա հրապարակվեց, մեծ սկանդալ էր, ու դրանից հետո երկու բան եղավ. նախ իմ և կազմակերպության դեմ հայցեր ներկայացրեցին դատարան՝ պահանջելով ընդհանուր առմամբ համարյա 65 միլիոն դրամ և երկրորդը,  «Իրավունք» թերթը հրապարակեց իմ ընտանիքին վերաբերող բավականին անձնական բնույթի տեղեկություն, որը ոստիկանությունն էր: Հրապարակումից հետո քրեական գործ հարուցվեց իրենց հրապարակման դեմ, այդ գործը մինչև հիմա հանգուցալուծման չի հասել, ոչ ոք ձերբակալված չէ: Ինչ վերաբերում է հայցերին, ապա բոլորը ետ վերցրեցին իրենց հայցերը:

Այդ ժամանակ ամենամեծ ինքնավստահությունն ինձ տալիս էր հանրային սատարումը, մենք այնպիսի հանրային սատարում էինք վայելում, որ գիտակցում էինք, որ մեծ վտանգ մեզ չի սպառնում: Իրոք, թե լայն հանրությունը, թե հանրության տարբեր շերտեր մեզ ինտենսիվորեն սատարում էին: Բոլորն աջակցություն էին առաջարկում, երբ այդ հայցերի մասին ինֆորմացիան հայտնի դարձավ, մի քանի տասնյակ փաստաբաններ առաջարկեցին անվճար պաշտպանել, և դա չհաշված այն հասարակական կազմակերպություններին, որոնք պատրաստ էին անվճար մեզ պաշտպանել: Այնպես որ մենք բավականին ինքնավստահ էինք մեզ զգում: Բռնություններ իմ նկատմամբ չեն եղել: Իրականում ես ամբողջ իմ կյանքի ընթացքում ոստիկանական բաժանմունք ընդամենը 2 անգամ եմ տարվել, և դա միջին վիճակագրական ակտիվիստի համար շատ ցածր թիվ է:

Հասարակությունն է ամեն ինչի որոշողը. եթե ինչ-որ երկրում հասարակությունը համարում է, որ հասարակական կազմակերպությունները հակապետական գործունեությամբ են զբաղվում, ապա պետք չէ շատ զարմանալ, որ ՀԿ ղեկավարներին կամ ակտիվ լրագրողներին, սպանեն, բանտ նստեցնեն կամ գրպանը թմրանյութ գցեն: Բայց այն երկրներում, որտեղ հասարակությունը հասկանում է, որ այս մարդիկ օգտակար գործ են անում, իսկ Հայաստանում մարդիկ հասկանում են, որ մենք օգտակար գործ ենք անում, այդ հասարակություններում մեծ հաշվով որևէիցե վտանգ չկա:

Այն գաղափարները, որոնցով մենք առաջնորդվում ենք և փորձում ենք տարածել՝ ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, այդ գաղափարները պետք է դարձնել անպարտելի: Շատ տեղերում դրանք պարտվել են, բայց գոնե Հայաստանում մենք պետք է դարձնենք դրանք անպարտելի»:






**DANIEL IOANNISYAN**

***Human rights defender, Program Coordinator of «Union of Informed Citizens» NGO***

# I ALWAYS ASK MYSELF A QUESTION: HOW IT HAPPENS, WHEN PEOPLE ARE INDIFFERENT?

"I am Daniel Ioannisyan. Usually I try to introduce myself as an NGO person, an NGO co-coordinator, who tries to do something useful. I always ask myself a question: "How it happens, when people are indifferent?" This is something I cannot understand. I cannot answer the question why I am not indifferent, because it's a natural state; it's a natural, logical state. You cannot be indifferent. I am not the only one who is not indifferent.

In 2017 we conducted an interesting investigation, to prove that directors at schools and kindergartens work in favour of the Republican Political Party.

This information was further published and became a great scandal. After that two things happened: firstly, actions were brought before the courts against the NGO and me, claiming totally about AMD 65 000 000, and secondly, "Iravunk" newspaper published information of quite personal nature about my family. This information was only under the possession of the police. After the publication a criminal case was filed against those who published this information, though this case is not yet solved. Nobody is arrested yet. As for the actions concerning AMD 65 000 000, those who had brought them, took them back very soon.
At that moment, the self-confidence I felt was conditioned by the public support we enjoyed. The support was so great, that we realised we were not under a great danger. Because both the wide range of the public and the narrow range of the public, various layers of it supported us intensively by various methods. Everybody offered their support.

When people got aware of the actions brought against us, tens of advocates offered to defend us free of charge. Not counting all those NGOs which were ready to defense us free of charge. This is just one example among many others. The international public supported us, and also the common public and ordinary citizens who were more active supported us. So we felt quite self-confident.
No violence was applied to me formerly. Actually, during whole my career or more rightly my life I have been taken to the police station only twice. And this is a very low number for an average statistical activist.

Actually it is the society who is to make decisions upon everything. If in a country the society considers that the NGOs are engaged in anti-government activities one should not get very much surprised that in that country the heads of the NGOs or active journalists are murdered, taken to the prison, or are cheated by being put narcotic substances into their pockets. But in countries where the society understands that these people do something useful, for example in Armenia people understand that the work we do is useful, you may not expect a great danger.

The concepts - such as democracy, human rights - by which we are guided and which we try to outspread shall be made invincible. I do not consider them to be invincible at the moment, because there were many cases where these concepts got lost. But I think we should make them invincible at least in Armenia."





**ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*«Տարկետում լինելու ա»*
*նախաձեռնության հիմնադիր անդամ*

# ԱՄԵՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ, ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ

«Անունս Դավիթ Պետրոսյան է: Այժմ ուսանող եմ: Այս ժամանակահատվածում ինձ ընկալում եմ որպես մարդ, ով ունի պարտավորություն ուսանողական տարածքում հեղափոխության կողմից հռչակված սկզբունքներն ու արժեքները հասցնելու և բարեփոխումներ իրականացնելու: Հեղափոխությունը չի ավարտվել, այն դեռևս շարունակվում է ոչ միայն մեր մտքերի, գաղափարների մեջ, այլև համալսարանական տարածքում, որտեղ ձևավորված հին երևույթները, որոնք վնասում են ուսանողներին ու դասախոսներին, դեռևս պահպանվում են: Ինձ համար ամենալուրջ ազդակը, որի պատճառով նաև ես ներգրավվեցի այս նախաձեռնության մեջ, այն էր, որ Ազգային Ժողովում հայտարարություն եղավ այն մասին, որ եթե մագիստրոս ու ասպիրանտ տղաները գնան բանակ, նրանք դրական փոփոխություն կանեն, մթնոլորտի վրա կազդեն: Դա ինձ համար աբսուրդ էր ուղղակի, որովհետև բանակում դրական փոփոխությունններ պետք է անեն սպաները, ովքեր պարտավորված են դա անելու: Եթե մենք բանակում ունենք մթնոլորտի խնդիր, մենք չպետք է դա անենք գիտությամբ զբաղվող 25-26 տարեկան մարդկանցով: Ես ծառայած լինելով վստահ եմ, որ բանակում մթնոլորտ փոխելու համար առաջնային է ոչ թե մասնագիտական գիտելիքները, այլ կամային հատկանիշները: Մենք ասում էինք՝ եթե մեկ հետ համաձայն չեք, մեկ հակառակը ապացուցեք, մենք էլ հասկանանք: Բայց փորձը ցույց տվեց, որ երեք ամիս այդ մարդիկ բերեցին նույն պատճառաբանությունները, ոչ մի նոր փաստարկ, նոր հետազոտություն չբերվեց: Միայն այն էր, որ եթե Հանրապետական կուսակցության առաջնորդները որոշել են, որ այս օրենքը պետք է անցնի, ապա այն պետք է անցնի: Իսկ դա մեկ մոտ բերեց ոչ թե ետ գնալու ցանկություն, այլ հակառակը՝ ավելի շատ պայքարելու, որովհետև երբ դու տեսնում ես, որ բանավեճը ոչ թե հիմնված է խոսքերի վրա, այլ այն բանի վրա, որ մարդիկ մտածում են՝ իրենք ուժեղ են, դա քեզ ավելի է մոտիվացնում:

Իմ նկատմամբ շատ մեծ ճնշումներ չեն եղել: Համալսարանում էին հիմնականում



ասում՝ «Քեզ պե՞տք ա, ինչի՞ ես խառնվում»: Համալսարանում մենք հատուկ բաժին ունենք Ազգային անվտանգության ծառայության, այնտեղ են կանչել մի երկու անգամ: Ոստիկանության բերման ենթարկման դեպքեր են եղել: Բայց ինչ-որ մի բան, որը լուրջ կազդեր ինձ վրա, չի եղել: Իրենք գիտեն՝ ում են ճնշում: Եթե գիտեն, որ այդ ճնշումը կարող է բերել հանրայնացում, այդ մարդը հակառակը՝ կարող է ավելի տաքանալ, ուրիշ բաներ սկսի անել, իրենք չեն ճնշում: Եթե ուսանողները պայքարում են, պետք է լավ սովորեն, որ իրենց հետ կապված ամեն ինչ լինի կատարյալ, որ իրենց հարվածելու տեղ չունենան: Եթե դա չկա, սկսում են ծնողների հետ խոսել, թե բա ձեր տղան «կյանքի ճիշտ ուղուց շեղվել է, խոսեք իր հետ»: Երբ ծնողներդ ասում են, որ իրենք են քեզ այդպես դաստիարակել, այդ տարբերակն էլ չի անցնում: Եթե մարդիկ կարծում են, որ քո նկատմամբ ուժ կիրառելով դու էլ չես խոսա, դա չի ստացվելու:

Ես չեմ դիտարկում այս հեղափոխությունը որպես վերջնական հաղթանակ: Սա ամենալուրջ պայքարն էր, ու այս ընթացքում եթե որևէ բան ինձ հետ չպահեց, այլևս չի պահի: Մենք պետք է լինենք զգոն, հեղափոխությունը պետք է պահպանել ու ամրապնդել ու դա չի նշանակում, որ ինչ-որ քաղաքական ուժի շահերն է պետք ամրապնդել: Շատ կարևոր է, որ մենք չհամարենք, թե ամեն ինչ վերջացել է, թե քաղաքացիական հասարակություն մեկ այլևս պետք չէ, որ հաղթեցինք, ու բոլոր հարցերը լուծվելու են: Այդպես չէ, ամեն իշխանություն կարիք ունի քաղաքացիական հասարակության, ընդդիմության: Այսինքն՝ այդ պայքարը հավերժ է ու այդ պայքարը պետք է շարունակել»:




**DAVIT PETROSYAN**

***a founding member of***
***"There Will Be Deferments" initiative***

# EVERY AUTHORITY NEEDS A CIVIL SOCIETY, AN OPPOSITION

"My name is Davit Petrosyan. At the moment I am a student. In specifically this period of time I perceive myself as a human being, who has got the responsibility to get across to the students within the framework of the university the principles and values proclaimed by the revolution and to make reforms as the revolution is not over yet, it still goes on. It goes on not only in our thoughts, in our conception, but also in the territory of the university where values and phenomena causing harm to the students and lecturers were formulated; and these old values and phenomena are yet preserved.

The most serious impulse that made me participate in this initiative was when an announcement was made in the National Assembly that the PHD and the Master's degree male students would make positive changes and affect the atmosphere when they join the Army; this was, actually, an absurd for me. Because people who are to make changes in the Army are the officers, who bear the responsibility for it. If we record that we have a problem with regard to the atmosphere within the Army, we should not wait for the group of 25-26-year old people engaged in science to solve this problem, having the hope that these people will change the atmosphere.

Because, having served in the Army, I am sure that for changing the atmosphere of the Army not the professional knowledge, but the volitional powers are prior. We emphasized: "If you do not agree with us, prove us the opposite, in order we could understand". But the experience showed that these people have been bringing the same reasoning for three months. No new argument or research has been brought. The only thing was like if the Republican Party, with its leaders, decided that the law will be adopted, it would be that way. And this motivated us not to retreat, but to struggle more. Because when you see that their debate is based not on words but on the factor that they consider themselves mighty, it makes the motivation stronger.

To tell the truth no severe pressure was applied to me. Generally in the university I was told: "What do you need it for? Why do you meddle?" We have a special department for the National Security Service there and twice I was called to there. Also there were cases of being arrested by the police, but nothing else has happened which could affect me seriously. Of course I do not mean that all that happened was normal. This is not normal, but as we had been in this atmosphere, we expected such things to happen, that is why we reacted quietly to the happening.

They know who they can apply pressure on. If they know that applying pressure will bring to publicising, that the person under pressure may become more jumpy and do something unexpected, they will not apply pressure. They try to understand what kind of levers they can use. For example, if a student has no problem with absences, he/she does well at the university; it is not an easy thing to affect such a student. That is why students who struggle must do well at university, everything concerning them should be ideal, in order no one could do anything with them.

If they see that this method brings no results, they start calling to your parents and tell them: "Your son has lapsed. You should speak to him." But sometimes parents reply: "We have brought him up that way. We have nothing to speak to you. Good bye." So neither this method works. When you see such methods are being used against you, it means you are right. Because if you were not right they would try to make you realise you were wrong by a debate or by using just words. But when people think if they apply force you will stop speaking out, it will not be the way they expect.

I do not consider this revolution as a final victory. This was the most serious struggle and if nothing could stop me during this period, nothing will stop me ever. We should keep on being vigilant. The revolution that happened needs to be strengthened and maintained. And this does not mean interests of some political force should be strengthened and maintained. Values and principles proclaimed by the revolution should be strengthened and maintained.

We should not lull our vigilance. Each of us is to do something to strengthen all this. Along with that I find it very important not to consider everything over, do not think we do not need a civil society any more. Don't think we have already won, everyone deserving detention shall be detained, and all the problems shall be solved. No, this is not that way. Every authority needs a civil society, an opposition. This struggle is everlasting and it should be continued."



**ԶԱՐՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

*իրավապաշտպան, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի անդամ*

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՄ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՆՁ ՈՒԺ ԵՆ ՏԱԼԻՍ, ՈՐՊԵՍԶԻ ՇԱՐՈՒՆԱԿՎԻ ԻՄ ՊԱՅՔԱՐԸ

«Ես Զարուհի Հովհաննիսյանն եմ: Այս պահին կյանքն ինձ բերել, հանգեցրել է այն կետին, որ զբաղվում եմ մարդկանց իրավունքների պաշտպանությամբ՝ հիմնականում խոցելի խմբերի ներկայացուցիչների մասին է խոսքը՝ կանանց իրավունքներ, ազատազրկման վայրում գտնվող անձանց իրավունքներ և այլ խոցելի խմբեր: Դա սկսվել է դպրոցից դեռևս, երբ նկատել եմ, որ դպրոցում խոսքի իրավունքի տեսանկյունից շատ բարդ իրավիճակ էր, և հնարավոր չէր ազատ արտահայտվել: Ես ուղղակի այնքան ըմբոստ էի, որ երբ դասի ժամանակ որևէ տեսակետի հետ անհամաձայնություն էր լինում ու ձեռք բարձրացնելով հնարավոր չէր լինում այդ անհամաձայնությունը հայտնել, ես կարող էի ամբողջ դասը վեր կենալ, այդպես կանգնել որպես բողոքի ձև և չնստեի իմ տեղը և չհնազանդվեի այդ ուսուցչին: Դա ակնհայտ մի տեսակետ էր, մոտեցում էր կյանքին, որ որևէ կերպ ես չեմ հնազանդվելու, և որևէ կերպ չեմ լռելու, եթե անգամ դա ուսուցիչ-աշակերտ հարաբերությունն է, որտեղ հիերարխիա կա: Ամենաարտառոց խոցելիության տարածքը դա անձնական տարածքն է, որտեղ մտնում են ու սկսում քչփորել, թե ով ես, ինչ ես եղել: Ես այ այդտեղ շատ եմ խոցվել, շատ եմ նյարդայնացել, բայց նաև սպառնալիքներն են շատ ցավալի, երբ ունես երեխաներ և սպառնալիքները հնչեցվում են հենց նրանց վերաբերյալ, արդեն ոչ միայն ցավալի է, ոչ միայն խոցում է քեզ, այլև վտանգավոր է դառնում արդեն: Դու պատասխանատու ես այդ մարդկանց կյանքի համար: Սակայն իմ մշակութային պատկերացումներն ինձ ուժ են տալիս, որպեսզի շարունակվի իմ պայքարը՝ անկախ նրանից, որ իրապես շատ դժվար է լինում երբեմն: Ի վերջո ցանկացած իրավիճակի փոփոխություն կամ ստրուկտուրալ փոփոխություն, երբ մարդկությունը զարգացել է, կատարվել է անհատների միջոցով:

Նրանց պատկերացումներն են, որ լուսավորել են այդ ճանապարհը, որպեսզի փոխվի մտածելակերպը, փոխվեն մարդկանց պատկերացումները, փոխվեն նաև մշակութային այն կարծրատիպերը, որոնք ուղղորդում են մեզ և խանգարում են ապրել: Դրանք այն կարծրացած պատերն են, որոնց շատ հաճախ երևի շատ մարդիկ հարվածվում են, փշրվում են և չեն կարողանում իրացվել այն ուժով, որով կարող էին իրացվել: Մարդը չպիտի լինի հումք որևէ համակարգի համար և մարդը պիտի լինի ազատ և ստեղծագործող: Ինձ համար այդ նախապայմանները շատ կարևոր են և ես այդպիսի հասարակություն եմ ուզում տեսնել, այդպիսի հասարակությունում եմ ուզում ապրել և ուզում եմ՝ այդ հասարակությունը լինի հարմարավետ մարդկության զարգացման համար: Եթե լինի համակարգ, որն անընդհատ մարդուն ստրուկ դարձնի և անընդհատ մարդուն մամլիչի պես վերածի գործիքի, մենք չենք կարող ուղղակի ունենալ նմանատիպ հասարակություն: Ի վերջո մարդը լույս աշխարհ է գալիս ստեղծագործելու, իրացնելու իր հնարավորությունները փոխօգնության համար: Ինձ համար դա է հենց այդ ուժը: Այդ պատկերացումն է հենց այն լույսը, որը տանում է ինձ իր հետևից»:





**ZARUHI HOVHANNISYAN**
***Human rights defender, member of the Coalition to Stop Violence against Women***

# MY CULTURAL NOTIONS GIVE ME STRENGTH TO CONTINUE MY STRUGGLE

"I am Zaruhi Hovhannisyan. At this moment, life has brought me to the point where I am dealing with the protection of human rights, mostly of the representatives of vulnerable groups; women's rights, the rights of people kept in places of detention and other vulnerable groups.

The reason I came to this situation is the difference between the basic concepts and our reality and also the contrast with my understanding existing in the culture of life.

It started yet in school, when I noticed that the situation was very complicated from the point of view of the right to speak and it was not possible to speak freely. I was just so rebellious that when there was a situation of disagreeing with a viewpoint during the lesson, and it was not possible to express this disagreement by raising a hand, I could stand up and keep on standing during the whole lesson as a form of protest and not sit on my place and disobey the teacher.

It was an obvious view, an approach to life, that I would not obey any of them, and I would not be silent in any way, even if it touched upon a "teacher-pupil" relationship where a hierarchy existed.

The most extraordinary vulnerable area is the private area where one enters and begins burrowing into your life trying to reveal who you are and what you have been. I have been hurt so much in this area, I got very nervous here. Threats are very painful when you have children and threats are heard about them, it's not only painful, it does not just hurt you, it already becomes dangerous. And you remember you are responsible for the lives of those people. But my cultural notions not only motivate but also give me strength to continue my struggle, notwithstanding the fact that sometimes it's really hard.

Eventually, any change in the situation or any structural change during the development of humanity has been made by individuals. Their perceptions have enlightened the way to change the humans' thinking, change their ideas, change those cultural stereotypes that lead us and hinder to living. These are the solid walls to which many people are often hit, crushed, and can not be self-realized with the power they could. A person should not be a raw material for any system and that a person should be free and creative comes forward. After all, a person is born to create, to realise his/her abilities for mutual help. This is the power for me. That idea is the light that makes me follow it."



**ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
*բժիշկ*

# ԵՍ ՄԻՇՏ ԿԱՐԾՈՒՄ ԵՄ, ՈՐ ԵՍ ԻՆՁՆԻՑ ՊԵՏՔ Է ՍԿՍԵՄ ՓՈԽԵԼ ԵՐԿԻՐԸ

«Ես Հայկ Հովհաննիսյանն եմ, մասնագիտությամբ՝ բժիշկ, աշխատում եմ որպես բժիշկ և դասավանդում եմ: Բնավորությանս մեջ ունեմ մի այսպիսի գիծ, որ ցանկացած դեպքում, երբ տեսնում եմ անարդարություն, նույնիսկ եթե դա ընդհանրապես ինձ չի վերաբերում, ես բարձրաձայնում եմ, փորձում եմ դրա դեմ պայքարել:

Ուրախ եմ, որ Հայաստանում մարդկանց գիտակցությունը բարձրացավ ու դուրս եկան պայքարելու իրենց ապագայի համար: Իմ պատկերացմամբ՝ դա անարդարության դեմ պայքար էր, ու եթե մարդը տեսակով պայքարող է և չի հանդուրժում անարդարությունը, եթե ներկայիս Կառավարությունն էլ թույլ տա, որևէ քաղաքականություն, որը օրինակ իմ կողմից կգնահատվի ոչ ճիշտ, շարունակելու ենք պայքարել:

Միջադեպը որ եղավ ինձ հետ հանրահավաքի ժամանակ չէր: Ես էլի տուժեցի կուտ իմ բնավորության պատճառով: Ես տեսա մի երևույթ, որն ինձ հուզեց, ամբողջ ներաշխարհս խառնեց իրար, և սկսեցի ես պայքարել դրա դեմ: Ես գնում էի, տաքսու մեջ էի արդեն ու տեսա, որ ոստիկանները պարզապես ծեծում էին ուսանողներին: Ընդ որում, ուսանողների կողմից որևէ հակազդող ուժ չկար, նրանք պարզապես քայլերթ էին անում: Իրավիճակը շատ անարդար էր, ես սկսեցի ըմբոստանալ, գոռգոռալ, և ոստիկանական գործողությունները կենտրոնացան ինձ վրա: Ինձ տաքսուց իջեցրեցին և փորձեցին բերման ենթարկել, որի ժամանակ անհամաչափ ուժ էին կիրառում, որի արդյունքում ստացա լուրջ վնասվածքներ՝ դիմային գանգի ոսկրերի կոտրվածք և ուղեղի ցնցում:

Ես չունեմ այդ հարցը, թե ինչու ես: Միշտ երբ ինչ-որ հարց է լինում, ասում եմ՝ հենց ես, օրինակ, եթե պիտի լինի մեկը, ով պետք է փողոցում կռանա, վերցնի թուղթը ու գցի աղբամանի մեջ, դա պետք է անեմ ես: Ես միշտ կարծում եմ, որ ես ինձնից պետք է սկսեմ փոխել երկիրը, ինքս ինձանից պետք է սկսեմ անել այդ հեղափոխությունը, որովհետև հեղափոխությունը միայն փողոցում մնալով կամ բղավելով չէ, հեղափոխությունը պետք է անենք ամեն մեկս մեր մեջ: Եթե մենք բղավում ենք, որ մեր երկիրը պետք է լինի ավելի լավը, երկիրը դա մենք ենք, մենք պետք է լինենք ավելի լավը:

Բացարձակ որևէ ճնշում չեմ զգացել երբևէ: Միգուցե դա իմ տեսակից էլ է գալիս: Մինչև հիմա նման բան չի եղել, չեմ էլ ուզում մտածել նման բանի մասին, որովհետև եթե լինի էլ այդպիսի բան, նահանջել չկա: Պարտվելը թույլ մարդու վարքագիծ է: Ցանկացած բան, որը նախաձեռնում ես անել ու այդ անելու ընթացքում տեսնում ես բարդություններ, հակազդող ուժեր, բնականաբար, միշտ հանձնվելը կա: Բայց դա հարցի լուծում չէ՝ ցանկացած իրավիճակում, այնպես որ չեմ կարծում, թե ես կհանձնվեմ»:



**HAYK HOVHANNISYAN**
***doctor***

WE SHALL START MAKING
BETTER OURSELVES TO MAKE
OUR COUNTRY A BETTER PLACE

"I am Hayk Hovhannisyan, I am a doctor, I work as a doctor and also teach. I have such a trait of character when I see something unfair, even if it has nothing to do with me, I speak about it aloud and try to fight against it.

I am glad that in Armenia peoples' self consciousness has arisen and people went out to fight for their rights for their future, and for the country's future. I just want the truth be spoken about aloud in a right way, I want everything to be right. It is the most important thing that everything is right and that there is no more injustice. It was a fight against unfairness according to my notions.

If a person is a fighter by his/her nature and does not tolerate unfairness he/she will continue to fight. Even if today's Government runs such a policy which the society or I will find not right, we will continue to fight against it.

The accident that happened to me was not because I was at a meeting or at a place of gathering. It happened to me because of my character. I suffered because I saw a phenomenon, which was unfair, which took my attention and turned everything in my heart upside down, and I began fighting against it. I was passing by in a taxi, when I saw that the Police was literally beating students. There was not a counteracting force by the students; they were not causing any disorders; they were just marching along the street. And I was in a taxi.

The situation was very unfair for me, so I revolted and shouted aloud from the window of the taxi which made the Police pay attention to me and their actions were directed towards me. They took me out of the taxi and tried to arrest me during which the force they applied was very disproportionate and in the result I got some serious injuries; such as fractures of frontal skull bones and brain concussion. I do not have such kind of question "why me?". Every time there is a problem, I think I am just the one who is to solve it. I mean if there is a piece of paper thrown in the street, I think I am the one who is to pick it up and throw to the basket.

Because I always think I am to start changing my country starting from myself, I must start the revolution from my inner world.




Revolution is not something when one stays outside in the street and shouts aloud, it is something each of us shall begin from ourselves. Because if all we shout that we want our country to be better, we shall realise that we are our country and we shall start making better ourselves to make our country a better place.

I never felt any pressure. Maybe it is conditioned also by the type I belong to. Nothing like it happened to me so far, and even if such a thing happens, I will not retreat. Retreating is a weak person's behaviour. Anything you plan to do you will go till the end no matter what kind of difficulties or contradicting forces you face, because surrender is the easiest thing in any situation. For example, you wake up in the morning and decide to go out, and then the lazy part inside you tells you not to go out and stay at home. And when you obey this lazy person inside you, it means you surrender, and it is not a way to solve a problem, it is not good. So I do not think I will ever surrender."



**ՄԱՐԻԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
*ակտիվիստ «Imagine» կոնֆլիկտների
տրանսֆորմացման կենտրոնի ծրագրերի
զարգացման պատասխանատու*

# ՔԱՆԻ ԴԵՌ ԵՍ ԻՆՁ ՍԱՀՄԱՆԵՄ ՈՐՊԵՍ ԱՆՊԱՐՏԵԼԻ, ԵՍ ԿԼԻՆԵՄ ԱՆՊԱՐՏԵԼԻ

«Ես Մարիա Կարապետյանն եմ: Մասնագիտությամբ լեզվաբան եմ, ու դա կարևոր է իմ ինքնության համար: Զբաղվում եմ տարածաշրջանային ծրագրերով և «Imagine» կոնֆլիկտների հաղթահարման կենտրոնում եմ աշխատում, որը նույնպես իմ ինքնությունը սահմանափակելու առումով շատ կարևոր է: 2018 թվականի մարտի սկզբին ես որոշեցի, որ պիտի ներգրավվեմ ներքաղաքական գործընթացում, հիմնական դրդապատճառը մեր հասարակությունում տիրող վախն ու դեպրեսիան էր, որը ես տեսել եմ մարդկանց մեջ: Ակտիվ քաղաքական ներգրավվածություն ունեցող մարդիկ ապատիայի մեջ էին, չէին զգում, որ որևէ բան կարող են անել: Որոշեցի, որ հերթը իմն է, ես էլ պիտի առերևույթ չեզոքությունը դնել մի կողմ և մասնակցեմ այդ գործընթացին՝ բնականաբար հույս ունենալով, որ ինչ-որ պահի հնարավոր կլինի արթնացնել այդ մարդկանց, հույս ներշնչել և ետ բերել այդ դաշտ: «Մերժիր Սերժին» առաջին ակցիայից հետո զանգ ստացա, այդ պահին տանը չէի, մայրիկս էր պատասխանել հեռախոսին, քաղմասից ինչ-որ ոստիկան որոշել էր, որ ստուգումներ պետք է անցկացնի քաղաքացիների աշխատավայրերի գրանցման վերաբերյալ: Այս պահին ես չեմ կարող պնդել, որ դա պայմանավորված էր իմ՝ ակցիային մասնակցությամբ, բայց շատ անսպասելի էր, առաջին անգամն էր, որ նման դեպք էր տեղի ունենում: Բացի դրանից իմ նկատմամբ  հասարակական առանձնակի ճնշում չի եղել, երևի թե բախտս բերել է: Ընտանիքս, իհարկե, անհանգստանում էր, երբ սրվում էր իրադրությունը, հատկապես Սերժ Սարգսյանին նախորդող մի քանի օրվա ընթացքում: Բայց անհանգստությունը նաև զուգորդվում էր մեծ ոգեշնչումով և խրախուսանքով, որ հարկավոր է անել, դու քեզ վրա մեծ պատասխանատվություն ես վերցրել, չես կարող դուրս գալ մի գործընթացից, որի ակունքներում նաև դու ես կանգնած զուտ անվտանգության նկատառումներից ելնելով: Ես կարծում եմ, որ այս շարժման մեծ ձեռքբերումներից մեկը ՀՀ քաղաքացիներին հպարտության զգացողությունը վերադարձնելն էր, և այդ առումով ցանկացած քաղաքացի կարող էր իրեն պատասխանատու զգալ ու պատկերացնել իր գործունեությունն այս գործընթացում: Այս հեղափոխությունը հնարավոր դարձավ տարիներ շարունակ տարբեր խմբերի կատարած աշխատանքի շնորհիվ: Սկսած բնապահպանական խմբերից, վերջացած ֆեմինիստական: Տարբեր խնդիրներ բարձրացնող խմբերի ջանքերի շնորհիվ է, որ կատալիզացվել է այս իրադրությունը, հետևաբար այդ մարդկանց պայքարները հիմա ունեն տարածք կրկին ու ավելի մեծ թափով ու ուժով աշխատելու, և այս հասարակության մեջ խորքը գնացող փոփոխություններ բերելու: Ինձ թվում է՝ վտանգներն անվանելու մեջ կա այդ վտանգները կատալիզացնելու գործառույթ: Ես կարծում եմ, որ բացասական մտածողությամբ, ռիսկերի ու վտանգների մասին անդադար մտածելով՝ դու դրանք դարձնում ես հավանական: Իհարկե շատ ճիշտ է պլանավորել ստրատեգիաներ, թե այս կամ այն իրադրության մեջ ինչպես պետք է քեզ պահես, ինչպես պաշտպանես քո իրավունքները: Բայց նաև կարծում եմ՝ դրանց մեջ ինքնաիրագործվող մարգարեության էլեմենտներ կան: Այսինքն, եթե ես  ինչ-որ բանից անդադար խոսում եմ, ակնկալում եմ, այդ սպառնալիքը կատալիզացվում է: Այս իրադրության մեջ մենք շեշտը պետք է դնենք այն սկզբունքների վրա, որ մենք բոլորս հավասար ենք, ճնշում չի կարող լինել: Հարկավոր է բացառել դա, պետք է գործենք այն տրամաբանությամբ, որ մենք ապատ ենք, հավասար, մեր իրավունքները պաշտպանված են: Դա պետք է լինի դիսկուրսը և այն, ինչ շեշտադրվում է: Եթե մենք անդադար շեշտադրենք վտանգները, հնարավոր հակահեղափոխական վտանգների մասին մտածենք, դրանք կիրագործվեն: Ես, լինելով լեզվաբան, կարծում եմ, որ խոսքն է սահմանում իրականությունը: Ինչպես նկարագրում ենք իրականությունը այդպիսին էլ դարձնում ենք այն: Քանի դեռ ես ինձ սահմանեմ որպես անպարտելի, ես կլինեմ անպարտելի և իհարկե շատ կարևոր է սեփական ուժերին հավատալը, քեզ զգալը հավասար, ինքնիշխան, աներկբա և անկոտրում: Եվ այդպես քեզ պահելով՝ քո տարածքը սահմանել քո գործունեության ոլորտը սահմանել: Այո, ես անպարտելի եմ»:



**MARIA KARAPETYAN**
*activist, Development director of Imagine Center for Conflict Transformation*

# AS LONG AS I DEFINE MYSELF INVINCIBLE I WILL BE INVINCIBLE

"I am Maria. I am a linguist and it is important for my identity. I am engaged in regional projects and I work in the Imagine Center for Conflict Transformation which is also very important for defining my identity.
It was in the beginning of March 2018 when I decided to get involved in this intra-political process; the main incentive was the hopelessness, fear, depression I saw in people in this society.

Those common groups which had been active in that political movement were having apathy towards what they can do; they thought they could do nothing. I felt a lack of people and decided it was my turn; I should also put aside that seeming neutrality and participate in this process, naturally knowing that at some moment it would be possible to awaken these people or give them hope and bring back to that sphere.

In the very beginning of the movement, after we organised the first "Reject Serzh" action on the 24th of March, a policeman from the police-station called to our home number. At that moment I was not at home and my mom answered the call. It turned out the policeman had decided to carry out checks with regard to the workplace and registration of the citizens. He said it was just an ordinary check-process. At the moment I cannot state that it had any connection with my participation in the action but it was very unexpected; it was the first time we received such a call.

No social pressure was applied to me in social network or during the demonstrations, except for that case. Maybe I was lucky enough not to face pressures. Of course my family worried when the situation became exacerbated, especially during the few days preceding Serzh Sargsyan's resignation. But this worry was accompanied by a great inspiration and encouragement that made continue.

Those two phenomena co-existed together. The first one was the warning, like. "Do not go out! Do not go there!", the second one was the encouragement, like. "No, it needs to be done! You have taken a great responsibility and you ought to deliver upon expectations! You cannot pull out of a process you are at the wheel of, just for the sake of safety."

I think one of the achievements of this action was the returning to the citizens of the Republic of Armenia the sense of pride. I think every RA citizen could feel responsible with that regard and recognise his/her actions in this process. This revolution became possible due to the work carried out by various groups during these years starting from environment protection groups, ending with feminist groups, those fighting for the rights of students, raising different types of problems. Due to efforts of various groups this situation was catalysed. Therefore, struggles of those people have a space to work again with greater intensity and strength and to make deepening changes in this society.

I think denomination of the dangers bears the function of catalysing those dangers. In general, I think unceasing thinking about risks and dangers by negative thinking makes them possible. Of course it would be right to plan and develop a strategy on how to behave oneself in a certain situation, how to protect one's rights, but I think this processes carry elements of self-reasonable prophecy.

I mean when I expect and speak much of something I catalyse that threat. I think in this situation we should emphasise the following principles: we all are equal and no pressure may be applied. That is to say it should be excluded. We should act with the logic that we all are free, equal and all our rights are protected. This should be the discourse and this is what should be emphasised. If all the time we emphasise the dangers, think of the possible anti-revolution mechanisms, they will become real. Because as a linguist I think the word defines the reality.

By describing the reality we imagine, we make it real. As long as I define myself invincible I will be invincible. It is very important to believe in one's own strength, to feel oneself equally self-governed, indubitable, unbending. One should define his/her territory, the sphere of his/her own activities by such behaviour. Yes, I am invincible!"




**ՄԱՐԻԱՄ ԱՆԱՆՅԱՆ**
*ակտիվիստ*

# ԵՍ ԱՆՊԱՐՏԵԼԻ ԵՄ. ԵԹԵ ՄԵՆՔ ԱՐԵԼ ԵՆՔ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԻՆՁ ԱՅԼԵՎՍ ՈՉԻՆՉ ՉԻ ԿԱՆԳՆԵՑՆԻ

«Ես Մարիամ Անանյանն եմ: 2015 թվականին ծանոթացել եմ Շահեն Հարությունյանի հետ ընկերացել ենք ու ինքն է ինձ ոգեշնչել և ծանոթացրել երկրի կոնկրետ իրական իրավիճակին: Մինչ այդ ինձ համար այդքան էլ հասկանալի չէր այս իրավիճակը: Չէի մտածում ընդհանրապես, թե մարդիկ ինչի համար են դուրս գալիս փողոց, ինչի համար են պայքարում, ինչ է իրենց ուզածը: Հետո ծանոթացա շատ մարդկանց հետ, ակտիվիստների հետ, ովքեր հիմա իմ ընկերներն են: Ծանոթացա, խոսեցի, շփվեցի իրենց հետ ու մտածեցի՝ ինչո՞ւ ես չէ, ինչո՞ւ ես չպետք է լինեմ դրսում, ինչո՞ւ պետք է իրենք լինեն դրսում, պաշտպանեն իմ իրավունքները, իսկ ես՝ չէ: Իսկ 2018 թվականին մենք հավաքվեցինք մի օր  որոշեցինք որ խաղաղ անհնազանդություն ենք իրականացնում, որոշեցինք, որ պետք է Ֆրանսիայի հրապարակում վրաններ դնենք ու մնանք վրաններում, ինչքան հնարավոր է շատ, ինչքան մեկ թույլ կտան: Վրաններ դրեցինք, մտանք մեջը:

Ոստիկանները եկան, պատռեցին վրանները, մեր ընկերներին տարան: Ու վատ, շատ վատ իրավիճակ էր, որովհետև դրանից առաջ մի մեքենա ուզում էր ինձ գցել մեքենայի տակ, հետո Արենը Մկրտչյանը եկավ, ձեռքիցս քաշեց, ինքն ընկավ, ինքը վնասվեց: Մեկ այլ օր էլ, Կառավարության երրորդ մասնաշենքի մոտից մեկ առավոտյան բերման ենթարկեցին: Շատ դժվարությամբ տարան. մոտ մի 30-40 րոպե դժվարանում էին տանել, բայց այդ ընթացքում անընդհատ քաշքշուքներ եղան, էլ հրել, էլ մեքենայի տակ մտնել, փակել: Հետո արդեն հասանք ոստիկանական բաժանմունք: Դավիթն ուներ մարմնական վնասվածքներ, ես սալջարդ ունեի ոտքիս հատվածում: Եկան մեկ տարան շտապօգնության մեքենայով: Երբ ես արդեն հետապնդվում էի, Դավիթին բերեցին: Դավիթն էլ հետապնդվեց ու միասին դուրս եկանք, ու նորից հարձակվեցին մեկ վրա: 10-15 հոգի էին. մեկն եկավ ձեռքերիցս պահեց, մնացածը սկսեցին փողոցի վրա հարձակվել: Ու կոնկրետ ասում էին, թե ինչ են իրենք մեկնից ուզում, ու թե մենք ինչ պետք է անենք: Ասում էին դուրս մի եկեք, մյուս անգամ ձեկ էլ դրսում չտեսնենք: Ծեծում էին, ասում էին՝ նայիր, եթե մեկ էլ քեկ ընկերներիդ հետ տեսանք դրսում, ավելի վատ է լինելու: Բայց ես չվախեցա: Եթե ոչ ես, ապա էլ ո՞վ:

Ումի՞ց ենք պահանջելու, որ դուրս գան փողոց: Ես կարող եմ տանից ասել դուրս եկեք, դուրս եկեք: Բայց էդպես չի լինի, ես պետք է դուրս գամ ու ինձնից փոքրերը պետք է տեսնեն, որ ես դուրս եմ եկել, ու իրենք էլ դուրս գան: Իսկ ինձնից մեծերը, ովքեր չեն հավատում, որ հնարավոր է ինչ-որ բան փոխել, պետք է տեսնեն, որ ես հավատում եմ, ինձնից փոքրերը հավատում են ու հասկանան, որ իրենք ուղղակի իրավունք չունեն չհավատալու: Ես անպարտելի եմ: Եթե մենք արել ենք հեղափոխություն, ինձ այլևս ոչինչ չի կանգնեցնի: Ես երեք տարի երազել եմ հեղափոխության մասին: Այն օրը, երբ հասկացա, թե ինչի են դրսում ու ինչ են ուզում, ու երբ արդեն ես էլ էի դրսում ու ես էլ էի նույն բանն ուզում, այդ օրվանից մինչև հեղափոխության օրը ես ամեն օր երազել եմ դրա մասին մասին:

Երբ դու հասնում ես երազանքիդ, կանգնում ու նայում ես երազանքիդ աչքերին, ասում ես. «Ես հասա քեզ», դրանից ուժեղ ոչինչ չկա»:



**MARIAM ANANYAN**
***activist***

# I AM INVINCIBLE.
# IF WE MADE A REVOLUTION,
# NOTHING ELSE
# CAN STOP ME EVER

"I am Mariam Ananyan. In 2015 I got acquainted with Shahen Harutyunyan. I got to be friends with him and he inspired me and introduced me to the real situation in the country.

Because prior to getting to be friends with Shahen, I did not have clear notion about the situation. I did not think at all for what people were going out, what they were fighting for and what they wanted.

I got to know a lot of people and activists as well who are now my friends. I got to know them, talked and interacted with them, and realized the following - Why not? Why should I not be outside? Why should they be outside, protecting my rights, and I should not?

In 2018 we gathered one day and decided that we were exercising peaceful disobedience and decided that we should set up tents in the French Square and stay in that tents. We should do that as long as it was possible and as much as we were allowed.

We set up tents and entered into them. The policemen came and tore the tents, they took our friends. It was a bad, very bad situation, because before that a car tried to run over me, then Aren Mkrtchyan came and held my hand, after which he fell down and was damaged.

Another day of demonstrations, in the morning we were detained in front of the Third Government Building. It was very difficult for the policemen to take us to the police station. It took some 30-40 minutes to take us, but during all that time there was rattling, pushing, entering under the cars, closing of streets.

Then we reached the police station. David Petrosyan had got bodily injuries, I had a contusion in the area of my foot. An ambulance car arrived and took us to hospital.

When I was being examined, David was brought in. David was also examined and we went out together. And when we went out they attacked on us again. There were 10-15 people. One of them came and held my hands and the others began to attack on us in the street.

And they said exactly what they wanted from us and what we should do. They said they did not want us to come out. They beat us and said: "Look, if we see you with your friends outdoors, the situation will turn to be worse for you."

I was not afraid at all. Who else if not me? Who else shall I expect to come out? I might call everybody to come out while sitting at home myself. But I cannot that way; I must go out, in order those who are younger than me could see and follow my example. And the elder ones who do not believe that they can change something should see that I believe that younger ones believe and realize that they have no right to disbelieve.

I am invincible. If we made a revolution, nothing else can stop me ever. I've dreamed about it for three years. On the day I realized why they were out in the street and what they wanted and when I was out there and I wanted the same thing, from that day on until the day of the Revolution I dreamed about that. When you achieve your dream, stand and look into the eyes of your dream, you say: "I have achieved you," there is nothing stronger than that moment."



**ՆԱՐԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
*«Լոռի» հեռուստաընկերության գլխավոր խմբագիր*

# ԵՍ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՄ ԱՄԵՆ ՕՐ ՊԱՅՔԱՐԵԼ

«Ես Նարինե Ավետիսյանն եմ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության նախ՝ հաղորդավար, հետո՝ լրագրող, հետո՝ լուրերի բաժնի խմբագիր, դրանից հետո՝ հեռուստաընկերության գլխավոր խմբագիր, ավելի ուշ՝ արդեն համահիմնադիր-խմբագիր: Ես միշտ փորձել եմ ինչ-որ հարց լուծել: Ես շատ երկրներում եմ եղել, լավ կրթություն եմ ստացել որպես լրագրող, ավարտել եմ Փարիզի CFPJ-ի քաղաքական մեկնաբանների բարձրագույն լրագրողական դպրոցը, բայց ես վերադարձա Վանաձոր: Ինչո՞ւ, որովհետև ես չեմ համարում, որ իմ քաղաքում որպես լրագրող ես լուծել եմ բոլոր խնդիրները, որ գնամ Երևան: Անընդհատ պայքարել ենք, հանգիստ չեմ աշխատել ես երբեք, որովհետև Լոռու մարզում որքան իշխանություն փոխվեց, որքան մարզպետ եկավ, բոլորը ուզում էին «Լոռի» հեռուստաընկերությունը փակել, բոլորն ուզում էին իրենց սեփական հեռուստաընկերությունը ստեղծել և բոլորի աչքի փուշը «Լոռի» հեռուստաընկերությունն էր: Այդ բոլորի դեմ մենք պայքարեցինք, մենք փակվեցինք, նորից բացվեցինք: Ես շարունակում եմ ամեն օր պայքարել, որպեսզի մնանք, աշխատենք: Ինչո՞ւ պետք է ես այդպես ապրեի, այդ տարիները ես ափսոսում եմ: Ումի՞ց ես պահանջեմ իմ կորցրածը որպես մարզային լրագրող, մարդ, ով երբեք չի դավաճանել իր սկզբունքներին: Ես բազմաթիվ առաջարկություններ եմ ստացել իշխանությունների կողմից: Ինձ ասում էին՝ մեզ հետ եղեք, շատ լավ կլինի ձեզ համար, դուք ամեն ինչ կունենաք: Չէ՞ որ մենք հրաժարվել ենք այդ ամենից: Հրաժարվել ենք, բայց միաժամանակ մենք ենք տվել: Հիմա այդպիսի ճնշումներ գուցե չլինեն. ուղիղ եթերի ժամանակ լույսերն անջատվում են, և անհասկանալի անծանոթ մարդիկ լիքն են հեռուստաընկերությունում, օպերատորնականջիս շշնջում է՝ «Փախի՛ր»: Ասում եմ՝ բայց ինչո՞ւ փախչեմ, ի՞նչ պիտի լինի: Ասում է՝ «Փախի՛ր, քեզ են ման գալիս»: Ու այդ մթության մեջ ինձ պատուհանից դուրս են գցում մեր աշխատողները մեկուկես հարկ էր, պատկերացնում եք, չէ՞: Ճնշումներ շատ են եղել: 2008 թվականին ահավոր էր, երբ Լևոն Տեր-Պետրոսյանի ֆիլմը ցույց տվեցինք: Այդ ֆիլմը ցուցադրվեց «Ա1+» հեռուստաընկերության կողմից, նախընտրական ֆիլմ էր, բաժանվել էր բոլոր հեռուստաընկերություններին: Արգելք կար այդ ֆիլմը ցույց չտալու: Շատերը ցույց չտվեցին: Մենք ցույց տվեցինք այդ ֆիլմը և ուղղակի փախանք Վանաձորի անտառներ: Ամբողջ Հանրապետության իրավական համակարգը մեզ էր փնտրում: Ինչո՞ւ փախանք, վտանգը մեծ էր, շատ մեծ էր, ու ամեն ինչ կարող էր լինել, ինչպես և եղավ այս տարիների ընթացքում իմ մեքենան այրեցին ավտոտնակում: Ես անպարտելի չեմ, ես բազմաթիվ պարտություններ եմ կրել, որովհետև այդ տառապանքի, մաքառումների ճանապարհին պարտություններ են եղել, բայց իհարկե, ընդհանուր առմամբ դա հաղթանակ էր նաև: Սերժ Սարգսյանի, Ռոբերտ Քոչարյանի տարիներին մեր կյանքի գնով, մեր համարձակության շնորհիվ ձեռք բերած ազատությունը պիտի չկորչի»:



**NARINE AVETISYAN**
***Editor-in-Chief of «Lori» TV***

# I CONTINUE TO STRUGGLE EVERY DAY

"I am Narine Avetisyan. At the beginning I was a news anchor of "Lori" TV in Vanadzor, and then I was a journalist, later an editor of the newsroom, then the editor-in-chief of the TV Company and later co-founder-editor.
I've always tried to solve a problem. Living in Vanadzor, of course, I visited many countries in those years; I got quite good education as a journalist. I graduated from the CFPJ High School of Journalism for political commentators in Paris, etc.

But I returned to Vanadzor. Why? Because in my town, here in Vanadzor, I do not consider I have solved all the problems as a journalist to go to Yerevan. I have always struggled, I have never worked quietly.

Because despite the fact that the authority changed in Lori Marz and new governors came to head the Marz, yet everyone wanted to close the "Lori" Television Company. First of all, they all wanted to create their own Media and TV Company. And "Lori" TV was always an eyesore to everyone. We struggled against all this; we were closed and then opened again. I continue to struggle every day in order to stay and work. Why should I live my life that way? I regret these years. Who shall I demand from everything I lost as a journalist, as a regional journalist, who has never betrayed her audience?

I also received a number of proposals from the authorities. You know, they told us to go with them, they promised it would be great for us, we would have everything. After all, we have refused and given all that by ourselves at the same time.

Nowadays, maybe there will be no such pressure, but when the lights are turned off and the TV studio is full of unknown strangers it's awful. The operator whispers in my ears: "Run away."

I say: "What's going on, what's up, why should I run away?" And he answers: "Run away, they've come to you, they want to catch you." And in the darkness our workers threw me out of the window. Our building had a height of about one and a half floor. Can you imagine it? I faced pressures many times.

I can even say that in 2008 it was horrible when we broadcasted Levon Ter-Petrosyan's film. The film was prepared by "A1 +" TV Company and spread among all the TV companies. It was a pre-election film and it was prohibited to show that film. Many TV Companies did not show it; perhaps most of them did not show.

We broadcasted the film and ran away into the forests of Vanadzor. The entire law enforcement system of the Republic was looking for us. Yes, we ran away. But why did we do that? Because the danger was great, perhaps it was huge. Everything was possible.

Like many times in these years, they broke my car, burned it in my garage. I am not invincible; I have suffered many defeats, because those ways of suffering and wrestles were defeats.
Of course, in general, it was a victory. The freedom we gained by dint of our lives even during the times of Serzh Sargsyan, Robert Kocharyan, is a victory. We managed to keep this freedom somehow due to our courage, did not we?"




**ՆԻՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՑ**
***«Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ***

# ՄԵՔԵՆԱՆ ՇԱՏ ՄԵԾ ԱՐԱԳՈՒԹՅԱՄԲ ՔՇԵՑ ԻՆՁ ՎՐԱ, ԲԱՅՑ ԵՍ ՏԵՂԻՑՍ ՉՇԱՐԺՎԵՑԻ

«Ես Նինա Կարապետյանցն եմ՝ փաստաբան, քաղաքացի, իրավապաշտպան, կին, մայր, մի խոսքով՝ շատ տարբեր դրսևորումներով անձ:

Ես հիշում եմ, երբ մանկապարտեզում երեխաներից մեկին պատժելու համար դաստիարակը նրան փակել էր մութ պետքարանում, լույսն անջատել էր, ու դա ինձ վրա շատ վատ էր ազդել: Հիշում եմ, որ երբ ինչ-որ ստուգող խումբ եկավ, ու խոսում էին երեխաների մասին, ես ասացի, որ դայակը դուռը փակել էր իմ խմբակցի վրա: Ինձ համար դա շատ վիրավորական էր: Հետո ուսուցչուհին, իհարկե, սկսեց ռեպրեսիվ մեթոդներ կիրառել իմ նկատմամբ, բայց ես չէի վղջում: Մինչև հիմա էլ ես այնպես տպավորված եմ: Հիշում եմ՝ ես վիրավորված էի մի դեպքում այն բանի համար, որ իմ ընկերոջը փակեցին և մյուս դեպքում՝ որ ակնվությունը, ճշմարտությունն ասելն այդպիսի ռեպրեսիաների հանգեցրեց: Ես այն ժամանակ էլ համարել եմ, որ ճիշտ եմ արել, հիմա էլ համարում եմ, որ շատ ճիշտ եմ արել: Դա երևի հոգեվիճակ է,որ դու քո կյանքը չես պատկերացնում այլ կերպ, քան ուրիշներին օգնելով: Ես կարծում եմ՝ եթե մարդ ունի ի վերուստ ուժ, ապա նա պիտի կիսվի այդ ուժով:

Նա պետք է ուրիշներին օգտակար լինի: Դու չես կարող դա միայն քեզ համար օգտագործել: Դա ակնիվ չէ: Այնպես, ինչպես որ մարդ ունենում է լավ ձայն ու կիսվում է իր ձայնով որպես երգիչ կամ ունենում է երաժշտություն գրելու տաղանդ, բայց միայն իր համար թաքուն չի նվագում, նա կիսվում է իր այդ կատարողական արվեստով ուրիշների հետ:

Ես գտնում եմ, որ իրավապաշտպանությունը՝ ավելի նեղ մասնագիտացված նաև փաստաբանությունը ուրիշներին օգնելու համար են: Շա՜տ ճնշումներ են եղել, ընկերական հորդորից մինչև ուղիղ սպառնալիքներ, որ ֆիզիկապես կոչնչացնեն: Օրինակ, Մարինա Պողոսյանի գործով, հիշում եմ՝ ուղիղ սպառնալիքներ եմ ստացել միջնորդավորված: Ինձ տեղեկացրել են, որ չնստեմ Մարինա Պողոսյանի մեքենան, որովհետև իրեն վերացնելու են: Իբր իրենց բարի կամքի դրսևորում ասել են, թե չեն ուզում, ինձ էլ վնաս պատճառել, ինձ էլ կյանքից զրկել:

Ես ուղղակի պատասխանեցի, որ եթե 0,0001% շանս կա, որ իմ ներկայությունը մեքենայում ինչ-որ մեկին կզսպի, ես նստելու եմ Պողոսյանի մեքենան և քնելու եմ այդ մեքենայում: Դեպք է եղել, որ մեքենա են քշել ինձ վրա: Գործերից մեկով մեր տան մոտակայքում մեքենան շատ մեծ արագությամբ անցավ: Ես ճանաչեցի մեքենան: Մեքենան շատ մեծ արագությամբ քշեց ինձ վրա: Բայց դա արդեն արժանապատվության խնդիր էր, գիտեք, ես ուղղակի տեղիցս չշարժվեցի: Մեքենայից դուրս եկան մեր հակառակ կողմից երկու բարձրահասակ տղամարդ ու ասացին. «Լավ, դու էս ի՞նչ դուխ ունես, որ չես վախենում, մեքենան էլ ենք քշում, չես վախենում»: Ասացի՝ դե հիմա էդ ա, պիտի յոլա տանեք:

Հետ գնալ, հետ նահանջել չկա, որովհետև երևի ի վերուստ տրված ուժ կա, որը դու կամ կարգացնում ես, կամ չես կարգացնում: Նույն կերպ, կարծում եմ, կան մարդիկ, ովքեր ի վերուստ ծնվում են ուժեղ և դաստիարակվում են այդպես: Ես կարծում եմ՝ իմ ընտանիքի գործոնը շատ մեծ է եղել: Թեպետ մասնագիտությամբ բոլորը բժիշկներ են եղել, մեծ մասը բժիշկներ, մի մասը՝ էկոնոմիստներ, բայց մեր ընտանիքում վերաբերմունքն այդպիսին է եղել՝ դու պիտի լինես ուժեղ ու պիտի օգնես քո կողքինին: Միշտ է այդպես եղել: Շատ դժվար իրավիճակներ են եղել, շատ դժվար: Եղել են մարդկայնորեն դժվար իրավիճակներ, որտեղից կարողացել ենք դուրս գալ արժանապատիվ, անկոտրում, դուխով, հավեսով:

Ես անպարտելի եմ իմ ներքին ուժով, իմ ընտանիքով, իմ գործընկերներով, իմ թիմակիցներով, իմ ընկերներով, հողով, ջրով, Հայաստանով, աշխարհով, տիեզերքով՝ ամեն ինչով անպարտելի եմ, որովհետև երբ դու ակնիվ ես, երբ քո նպատակներն ակնիվ են, ամեն ինչ քեզ աջակցում է: Ինչպես ասում են՝ ճակատագիրն օգնում է քեզ»:



**NINA KARAPETYANTS**
***President of «Helsinki Association for Human Rights» NGO***

# THE CAR DROVE ON ME WITH AN AWFUL HIGH SPEED, BUT I DID NOT MOVE FROM MY PLACE

"I am Nina Karapetyants, an advocate, a citizen, a human rights defender, a woman, a mother, in a word, a person with many different functions.

I remember when our nursemaid in the kindergarten closed one of the children in a dark toilet to punish, she turned the lights off and it had a very bad effect on me. I remember when a group exercising a check arrived and they talked with children, I said that our nursemaid had closed the door on one of my group members. For me it was very offensive.

Then the nursemaid, of course, began to apply repressive methods to me, but I did not regret what I had done. I'm yet so impressed. I remember being offended in one case for they have closed my friend in a dark room and, in the other case that honesty and telling the truth led to such repressions.

I then thought that I did the right thing, and now I consider it to be right. It's probably a mental status that you cannot imagine your life otherwise than by helping others. I think if a person has a power given from above, he/she ought to share that power with others.
He/she must be useful to others. You cannot just use it for yourself. It is not fair. Just as a person has a good voice and shares his/her voice as a singer or has a talent of music, but does not play solely for himself/herself, he/she shares his/her performing art with others.

I find that human rights protection and advocacy as a more narrowly specialized direction are for helping others. There were many pressures. There were also threats and pressures. Honestly, we had to deal with many threats from friendly "advice" to straightforward threats that they will physically destroy me.

When I was dealing with the case of Marina Poghosyan, I recall that I was directly threatened with mediation. I was warned not to sit into Marina Poghosyan's car because they planned to kill her. And as a manifestation of their "good will" they said they did not want to harm me and deprive me of life too.

I simply answered that if there was a 0,0001% of chance that my presence in the car would restraint someone from doing awful things, I would sit on Poghosyan's car and sleep in that car. During various cases threats concerning even my life were addressed to me.

Even a car was driven on me. A car drove past our house with a very high speed. I recognized the car. The car drove on me with an awful high speed. But it was already a matter of dignity, you know, I just did not move from my place. Two tall men came out of the car and said, "Well, what a courage do you have that you do not fear? We even drove a car on you, but you're not afraid." I said, "Yes, you have what you have. You have to withstand me!"

No going back, no hesitating, because probably there is a power sent from above that you either develop or not. In the same way, I think there are people who are born strong and are brought up in the same way. I think my family has played a great role. Though nearly all they are doctors - most of them are doctors and some economists - but in our family the attitude was like following - you have to be strong and help the others. It has always been so.
We faced many difficult situations, they were really very difficult. There were humanely difficult situations which we managed to overcome with dignity, in an irresistible manner, with courage and good mood.

I am invincible. What makes me invincible is my inner strength, my family, my colleagues, my teammates, my friends, the earth, water, Armenia, the world, the universe. I am invincible with everything I have, because when you are honest, when your goals are honest, everything supports you. As it is said - destiny helps you."



**ՍԵՐՅՈԺԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ**
***«ԷԽՈ» հաշմանդամություն ունեցող անձանց իրավապաշտպան կազմակերպության նախագահ***

# ՈՐԵՎ Է ԿՈՄՊՐՈՄԻՍԻ ՉԵՆՔ ԳՆԱՑԵԼ, ԵՎ ԻՐԵՆՔ ՀԱՍԿԱՑԱՆ, ՈՐ ԱՆՕԳՈՒՏ Է ՄԵԶ ՃՆՇԵԼԸ

«Ես Սերյոժա Օհանջանյանն եմ: Արդեն 10 տարի է, ինչ զբաղվում եմ հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրներով:

Երբ 7 տարեկան էի և պետք է հաճախեի հանրային դպրոց, մեր համայնքային չորս դպրոցները չընդունեցին ինձ, որովհետև ես ունեի հաշմանդամություն: Ես լավ հիշում եմ՝ մայրիկիս հետ դպրոցի տնօրենի սենյակի առաջ կանգնած էինք, երբ տնօրենն անգամ չցանկացավ նույնիսկ բացատրություն տալ մայրիկիս, թե ինչու ես չեմ կարող սովորել հանրակրթական դպրոցում:

Տարիներ անց տեղեկացանք, որ Հայաստանում ներդրվել է ներառական կրթությունը: Ես առաջին 10 երեխաներից մեկն եմ եղել, որ ներառական կրթություն եմ ստացել:

2008 թվականին մայրս հիմնադրեց կազմակերպությունը, որի նպատակն էր աջակցել հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ծնողներին՝ նրանց մատուցելով համայնքային ծառայություններ, քանի որ այն ժամանակ մի քիչ ավելի բարդ էին իրավիճակները և ավելի կար դրա կարիքը: Բայց երկու տարի անց մայրս հիվանդացավ, և ղեկավարությունն անցավ իմ ձեռքը: 2016 թվականին մեր կանոնադրությունը վերախմբագրվեց, և դարձանք իրավապաշտպան, որով մենք կարողացանք արդեն ապահովել ազգային մակարդակով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը:

Ճնշումների հանդիպել եմ, երբ որ 2014 թվականին առաջին անգամ բացվեց հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների լուսաբանման առաջին բլոգը Հայաստանում: Ես գլխավոր խմբագիրն էի, և հանրապետական տարբեր մարմիններ շատ էին կանգում, թե այս հոդվածը հեռացրու, դուք ճիշտ չեք մեկնաբանում և այլն: Անգամ մեր հարկային ծառայությունով են փորձել խոչընդոտել տարբեր ձևերով. եղել են փոքր, միջին ճնշումներ: Հենց ամենասկզբից որևէ բացառություն չենք արել, որևէ կոմպրոմիսի չենք գնացել, և իրենք հասկացան, որ անօգուտ է մեզ ճնշելը: Հաշմանդամություն ունեցող անձինք կան, որոնք իրենք են իրենց առանձնացնում հասարակությունից և սպասում են, որ բոլորն իրենց մոտենան, ասեն արի, ներառվի հասարակության մեջ: Բայց այդ գործընթացը երկուստեք է՝ 50-50:

50% պետք է քո կողմից ցանկություն լինի, 50%՝ հասարակության կողմից, կառավարության կողմից, որ քեզ աջակցեն, որպեսզի դու ինքդ կարողանաս քեզ վերականգնել թե՛ աշխատանքային գործընթացում, թե՛ կրթական համակարգում: Մարդու մեջ եղած ցանկությունն է ամենակարևորը: Եթե մարդ մի բան ցանկացավ, ամեն կերպ հասնում է դրան: Եթե մի բան «խնդիր» է կոչվում, ապա այն լուծելի է: Եվ այստեղ ինչ-որ բան ապացուցելու կարիք չկա: Դա դառնում է քեզ համար դոգմա, և դու դրա համար ես պայքարում: Ուղղակի վայելիր կյանքն ինչպես որ կա»:



**SERYOZHA OHANJANYAN**

***President of "EKHO" Disability Rights NGO***

WE DID NOT GO TO ANY COMPROMISE AND SO THEY UNDERSTOOD THAT THEIR ATTEMPTS TO HAMPER OUR WORK WERE USELESS

"I am Seryozha Ohanjanyan. I have been dealing with issues of people with disabilities for already ten years.

When I was 7 years old and had to attend a public school, our four community schools did not grant me admission because I had a disability. I remember quite well when I stood with my mother in front of the director's office waiting to enter the room but the director did not admit us or even explain to my mother why I cannot study at a public school. Years later we learned that inclusive education was introduced in Armenia. I was one of the first 10 children to receive inclusive education. And thanks to inclusive education, I started attending a public school at the age of 11.
In 2008, my mother founded an organization to support children with disabilities and their parents by providing them with community services because at that time overcoming their problems was a little more complicated and people with disabilities needed that kind of support more.

But two years ago my mother got sick and the leadership passed into my hands. In 2016, our charter was re-edited and we became human rights defenders, which provided us the possibility to secure the protection of the rights of persons with disabilities at the national level.

I faced pressures when the first blog covering the rights of people with disabilities was opened in Armenia for the first time in 2014. I was the editor-in-chief, and many republican authorities were calling me telling to exclude this or that article, saying that we did not comment correctly, and so on. They tried to hamper in various ways even through our tax service; yes, we faced small and medium scale pressures. We did not make any exception from the very beginning, we did not go to any compromise and so they understood that their attempts to hamper our work were useless.

There are people with disabilities who separate themselves from society and are expecting everyone to approach them, to help them, get included in the society. But this process is 50-50.

50% should be your desire, 50% should be the help offered by the public, the government to support you so that you can re-establish yourself both in the work process and in the education system.
A person's desire is the most important thing. If a person wants something, he/she would do it in any way. In my opinion, if something is called a problem, it is solvable. And there is no need to prove anything here. It becomes a dogma for you, and you start struggling for it. Just enjoy life as it is."




**ԱՐԱ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ**
*իրավապաշտպան*

# ԻՆՁ ՎՐԱ ԻՆՉՔԱՆ ՃՆՇՈՒՄ ԵՆ ԳՈՐԾԱԴՐՈՒՄ, ԵՍ ԱՅՆՔԱՆ ՈՒԺ ԵՄ ՍՏԱՆՈՒՄ

«Իմ անունն Արա Ղարագյոզյան է: Ես փաստաբան եմ և իրավապաշտպան: Զբաղվում եմ մարդու իրավունքների պաշտպանությամբ: Հիմնականում քրեակատարողական հիմնարկներում մարդու իրավունքների ոտնահարման դեպքերով եմ զբաղվում և նմանատիպ դատական պրոցեսներում դատական պաշտպանություն եմ իրականացնում քաղաքացիների համար: Մանկուց եմ այդ ուղին սիրել: Երբ անարդարություն եմ տեսել, չեմ կարողացել համակերպվել այդ անարդարության հետ: Երբ ընդունվեցի համալսարան, ավարտեցի, որոշեցի, որ նախ քրեական իրավունքի ճյուղով պետք է գնամ, կարողանամ այդ անարդարությունից մարդկանց կյանքեր փրկել: Եղել եմ ակտիվիստ և այդտեղից սկսած անարդարությունների դեմ եմ պայքարել և մինչ օրս պայքարում եմ, թեպետ մեր այս աշխատանքի ընթացքում շատ դժվար, խրթին ճանապարհներ ենք անցել: Բայց պետք է իրավապաշտպանն այդ գործունեությունն սկսելուց հասկանա, թե ինչ ուղով նա պետք է գնա և ինչ դժվարությունների պետք է հանդիպի: Երբ գնում ես քրեակատարողական հիմնարկ այնպիսի մի անձի պաշտպանության համար, որն ընդունված չէ հասարակության կողմից, այդ հիմնարկի աշխատակիցներն ու պետերը պարբերաբար փորձում են ինձ հետ խոսելուց ճնշում գործադրել՝ ասելով, թե նա ո՞վ է, որ պաշտպանում ես: Սա հոգեբանական ճնշում է: Նույն «Սասնա ծռեր»-ի գործով երբ զբաղվում էի, բազմաթիվ ճնշումներ են եղել, թեև մենք երբեք չենք բարձրաձայնել, բայց դա եղել է: Այդ գործերով եղել են սպառնալիքներ նաև պետական մարմինների կողմից, որ չզբաղվենք այդ գործերով: Սակայն դա որևէ բան չէր նշանակում: Մենք, ի վերջո, մարդու իրավունքների պաշտպանություն ենք իրականացնում, ոչ թե ինչ-որ հանցագործի պաշտպանություն: Նմանատիպ ճնշումները ես հաղթահարել եմ: Պետք չէ ընկճվել: Ինձ վրա ինչքան ճնշում են գործադրում, ես այնքան ուժ եմ ստանում՝ պայքարելու այդ անձի խախտված իրավունքների համար: Չեմ կարծում՝ որևէ ճնշում ինձ վրա կազդի: Կարող է՝ ոչ բոլոր դատական պրոցեսներում եմ դրական արդյունքի հասնում, բայց ինչ-որ ինձնից կախված է որպես փաստաբան, որպես իրավապաշտպան, արել, անում ու շարունակելու եմ անել»:




**ARA GHARAGYOZYAN**
***Human rights defender***

# THE MORE THEY APPLY PRESSURE ON ME, THE MORE I GAIN THE POWER TO FIGHT

"My name is Ara Gharagyozyan. I am an advocate and human rights defender. I mainly deal with cases of human rights violations in penitentiary institutions and implement judicial protection for citizens in such judicial proceedings. I have been interested in this sphere from the very young age. When I saw injustice, I could not put up with that injustice. When I was admitted to the university and graduated from it I decided that I should choose criminal law to save people's lives from that injustice. First of all I was an activist in any political or civil matter. From these initiatives on I have been struggling against injustice and my struggle keeps on going so far, though we have had difficult and challenging path during our work, we have come across difficulties. But a human rights activist should understand the direction he/she is to go and what challenges he/she should come across.

When I visit a penitentiary institution for the protection of a person who is not accepted by the public, employees and senior officials of the institution regularly try to apply pressure on you telling you that the person you are going to protect is not worth of being protected.

It is also a form of psychological pressure. When I was dealing with the case of "Sasna Tsrer" there were many pressures, though we never mentioned it, but it was: There were threatening by the state bodies concerning these cases; they warned us not to deal with those cases. But that did not ultimately, implement human rights protection and not protection of a criminal.

I have overcome such pressures. You should not be depressed.

The more they apply pressure on me, the more I gain the power to fight for the violated rights of that person. That is, I do not think any pressure will ever affect me. You get immunity and you do not pay attention to such pressures in future. Maybe I do not win all the judicial processes, but I do my best as an advocate, as a human rights activist. I have always done like that and will always do. Ultimately, we will achieve that people's violated rights will be restored."



**ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**
*ակտիվիստ, ՀՀ վարչապետի օգնական*

# ԵՍ ՍԻՐԱՀԱՐՎԱԾ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՆ ԱՆՄՆԱՑՈՐԴ

«Ես Արեն Մկրտչյանն եմ: Իմ ոչ անտարբեր վիճակը գալիս է ծնողներիս տված դաստիարակությունից: Ես դաստիարակության մեջ կարևորում եմ այն կոմպոնենտը, երբ ծնողներն արդարության կգացողություն են սերմանում երեխայի մեջ: Հենց այդտեղից է ծնվում, ու ինչ-որ մի կայծ հետագայում լինում է, որ արդարության այդ կգացողությունը սկսի պտուղներ տալ, և դու դառնաս քաղաքացի:

Եվ այդ կայծն ինձ համար Մաշտոցի պուրակի պայքարն էր: Ինձ համար մի դրվագ կա, որ ես երբեք չեմ մոռանա: Այդ պահին ինձ համար բեկումնային եղավ: Ցուցարարներից մեկը՝ մի աղջիկ, պառկել էր բեռնատարի այն հատվածում, որտեղ մեքենան պետք է դատարկեր պատրաստի բետոնե շաղախը:

Նա պառկել էր այդ հատվածում և բղավում էր. «Բետոնը կդատարկեք, բայց միայն ինձ վրա»: Ես հետագայում (դե, բնականաբար, արդեն բոլորն իմ ընկերներն են) այդ աղջկան այդպես էլ չկարողացա գտնել և նույնիսկ երբ տեսանյութերն էի դիտում, այդպես էլ այդ հատվածը չկարողացա գտնել ու շնորհակալություն հայտնել իրեն, որովհետև նա իմ մեջ բորբոքեց պայքարի կիրքը:

Մաշտոցի պուրակի պայքարից մինչև 2018 թվականն ընկած ժամանակահատվածում մի շարք կարևոր իրադարձություններ տեղի ունեցան, որոնք ինձ հասունացրին, որպեսզի ես վանգ ստանամ Գրիգորյան Արմենից՝ ընդգրկվելու այդ «Մերժիր Սերժին» նախաձեռնությունում և այդ փոքր խմբի կորիզի մի մասը լինեմ:

2018-ի Թավշյա հեղափոխությունն ալիքաձև տարածվեց մարզերի վրա ու ես երեխայի նման ուրախանում էի, երբ տեսնում էի, որ իմ հարազատ քաղաքում՝ իմ ծննդավայր Ալավերդիում մարդիկ դուրս են եկել պայքարի ու փողոցներն են փակում, երկաթգիծն են փակում: Եվ ես վերջապես հասկացա, որ արդեն տասը տարի անց այդ կարծրատիպը կոտրվել է նաև մարզերում: Մարդիկ դուրս էին գալիս պայքարի, և դա շատ կարևոր էր: Դա հաղթանակի գրավականներից էր:

Ինչ վերաբերում է ճնշումներին՝ ճնշումների բովով միշտ եմ անցել: Հատկապես 2015 թվականից՝ «Էլեկտրիկ Երևան» նախաձեռնության ժամանակներից: Իսկ SOS TV-ի ժամանակ ամեն հաջորդ թողարկումից հետո մենք սպասում էինք, որ կհայտնվեինք վերակենդանացման բաժանմունքում, ու այդ կենսակերպը ստիպեց, որ վախ ասվածն ուղղակի բնաջնջվի մեր ուղեղներից:

Չգիտեմ՝ դա լավ է, թե վատ, բայց դա փաստ է: Ես մի առիթով ասել եմ 2018-ին փողոց դուրս գալուց առաջ մեզ ասում էին, որ մեզ կծեծեն փողոցներում: Մենք ծեծվեցինք, բայց չկքեցինք համակարգի առաջ: Մեզ ասում էին կծեծեն ձեր ընտանիքի անդամներին, մենք դուրս եկանք պայքարի ընտանիքի անդամների հետ միասին:
Այսինքն՝ ընտանիքդ էլ եփվում է պրոցեսի մեջ ու դու իմունիտետ ես ձեռք բերում այդ ճնշումների, սպառնալիքների և այլնի նկատմամբ:

Եվ իսկապես, ես և իմ ընկերներից շատերը հանուն Հայաստանի Հանրապետության պատրաստ ենք եղել մեր ընտանիքի անդամներին, մեր ամենամտերիմ մարդկանց, մեր հարազատներին դնելու կռիասեղանին: Սա շատ սուբյեկտիվ ընկալում է: Յուրաքանչյուրն իր մեկնաբանությունն ունի. որոշներն ընդունում են, որոշները՝ ոչ: Բայց ես միշտ ասել եմ, որ սիրահարված եմ Հայաստանի Հանրապետությանն անմնացորդ: Եվ հանուն մեր պետության պատրաստ եմ նաև կրկվել ամեն ինչից: Փողոց դուրս գալու պատասխանատվություն կա: Ես, ամեն անգամ փողոց դուրս գալիս, անկախ նրանից, թե մեր թիրախը որն է, պատրաստ եմ եղել ամենատարբեր կորուստների, ամենատարբեր վրկանքների՝ առողջությունից մինչև աշխատանք: Մինչև անգամ հարազատներին վնաս տալ:

Ինչու՞: Որովհետև հակառակ պարագայում դառնում ես խոցելի: Եվ երբ համակարգն արյանդ հոտը կենդանու նման կգում է, կգում է, որ դու ընկրկում ես, դու խոցելի տեղեր ունես, ապա դու անմիջապես ջախջախվում ես, պարտված ես: Եվ նախորդ սիստեմը հենց այդպես էլ աշխատում էր: Փորձում էր տարբեր ուղղություններից և երբ գտնում էր տեղը, դու անմիջապես ջախջախվում էիր այդ հատվածից: Անխոցելի լինելու գրավականը դա էր՝ պատրաստ լինել կրկվելու ամեն ինչից՝ ամենաթանկից»:



**AREN MKRTCHYAN**
***activist, Assistant to the Prime Minister of RA***

# I AM IN LOVE WITH THE REPUBLIC OF ARMENIA EVERLASTINGLY

"I am Aren Mkrtchyan. My non-indifference comes from my parents' upbringing. In the upbringing I emphasize the component when parents instill a sense of justice in the child. Something will surely happen in the future which will make the sense of justice bear fruit and make you become a citizen.

And that spark for me was the Mashtots Park Movement. There is an episode for me that I will never forget. That moment was a turning point for me. One of the demonstrators, a girl lay under the truck, where the truck had to empty the prepared concrete grout.

She lied down on the ground and shouted: "You will empty the concrete, but only on me." I have not been able to find this girl for a long time (of course, many of the demonstrators of those days are now my friends), and even when I was watching the videos over and over again, I could not find that part and thank her for she inflamed the passion in me to struggle.

During the period from Mashtots Park Movement up to 2018, a number of important events took place that matured me so that I could get a call from Grigoryan Armen to be included in "Reject Serzh" initiative and be part of that small group core.

The Velvet Revolution of 2018 widespread across the marzes and I was delighted like a child when I saw that in my hometown - in Alaverdi - people came out and closed the streets, blocked the railway. And at last I realized that ten years later that stereotype was broken also in marzes. People were coming out to struggle and it was very important. It was the guarantee of victory. As for pressures, I have always been under pressure. Especially since 2015, during the initiative called "Electric Yerevan". And as for the period when I was with SOS TV, after each program we waited for being taken to the resuscitation department, and that way of life made us forget what fear is. I do not know whether it's good or bad, but that's a fact.

On one occasion, I said that before coming out the street in 2018, we were told we would be beaten on the streets. We were beaten, but we did not bend down before the system. They told us our family members would be beaten and we went out to struggle with our family members.

That is to say, your family boils in the process and you get immunity to those pressures, threats, and so on.

And indeed, I and many of my friends were ready to put our family members, our closest people, and our relatives in the altar for the sake of the Republic of Armenia. This is a very subjective perception. Everyone has his/her own interpretation. Some accept it, others do not. But I have always said that I am in love with the Republic of Armenia everlastingly. And for the sake of our state I am ready to lose everything.

There is a responsibility to go out into the street. Every time I go out into the street, no matter what our target is, I am ready for a variety of losses, for harsh privations - from health to work and even up to causing harm to my relatives.

Why? Because otherwise you become vulnerable. And when the system feels like a flock the smell of your blood, it feels like you're falling apart, you have a lot of vulnerabilities, and you are immediately defeated, you get the worst of it.

And the previous system was working just that way. It tried from different directions and when it found your weak place, you were immediately fired from that part. The guarantee of being invulnerable was to be ready to be deprived of everything dear to you."

VELES

Ամսագիրը պատրաստվել է **«Վելես»**
իրավապաշտպան հասարակական
կազմակերպության կողմից
**«Մենք անպարտելի ենք»**
ծրագրի շրջանակներում՝ Երևանում
Չեխիայի Հանրապետության
դեսպանատան ֆինանսավորմամբ:

This magazine has been produced by
"**Veles**" Human Rights non-governmental
organization in the frame of the project
"**We Are Invincible**"
financed by the Embassy
of Czech Republic in Yerevan.

Embassy of the Czech Republic
in Yerevan